4 ՅՈՒԼԻՍ 2012 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 121(4973)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651

## «Իմ առաջին մեղադրողը հենց ես եմ»

*Հայտարարում է Ռուբեն Հայրապետյանը եւ հրաժարվում պատգամավորական մանդատից*

**Երեկ երեկյան անակնկալ շրջադարձ տեղի ունեցավ «Հարսնաքարի» ոճրագործության խնդրում. հայոց բանակի սպա, բժիշկ Վահե Ավետյանի մահվան 4-րդ օրը, համընդհանուր դժգոհության եւ հզոր ընդվզման մթնոլորտում, հանրապետության նախագահի կողմից ընդունվելուց անմիջապես հետո, Ազգային ժողովի պատգամավոր, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ, «Հարսնաքար» ռեստորանային համալիրի սեփականատեր Ռուբեն Հայրապետյանը վերջապես ներկայացրեց իր մեղայականը, եւ դիմում ներկայացրեց պատգամավորի մանդատը վայր դնելու վերաբերյալ: Նրա հայտարարության անկեղծությանը, որն ամբողջությամբ հրապարակում ենք ստորեւ, չհավատալու պատճառ չունենք, բայց կարծում ենք, որ այդ mea culpa-ն պետք է առիթ լինի հրաժարվելու նաեւ մյուս պաշտոնից, նաեւ օտարելու կամ բնույթը փոխելու իր տխրահռչակ ռեստորանային համալիրի: Համենայնդեպս, կարծում ենք, որ սա դաս կլինի նաեւ զոռբայության սինդրոմով տառապող մյուս օլիգարխների ու նրանց աջակցողների եւ սպասարկուների համար:**

### Ռուբեն Հայրապետյանի հայտարարությունը

Ամեն ինչ կտայի, որ այդ չարաբաստիկ երեկոյան լինեի այնտեղ, բռնեի երիտասարդների վրա բարձրացող բռունցքները, կանգնեցնեի այս դժբախտությունը, որ կյանք խլեց, ընտանիքներ կործանեց, երեխաներ որբացրեց: Ամեն ինչ կտայի այս ամենը հետ պտտելու համար: Բայց չեմ կարող: Վահեն արդեն չկա: Ու ես դրանով պետք է ապրեմ: Ու պետք է նայեմ նրա ընտանիքի անդամների աչքերին: Չգիտեմ ոնց:

Ասում են ամեն ինչ օրենքով պիտի լինի. վստահ եմ օրենքով կլինի, 100 մեղավոր կլինի՝ 100 պատիժ կլինի: Բայց հարցը միայն օրենքը չի:

Հարցը շատ ավելի բարդ է: Ու ես դա շատ լավ եմ հասկանում: Հիմա շատերն են մեղադրում ինձ, նույնիսկ բաների համար, որ ինձ հետ կապ չունեն կամ հորինված են. երեւի իրավունք ունեն: Բայց իմ առաջին մեղադրողը հենց ես եմ: Ես պիտի կանխեի նման դժբախտությունը ու չեմ կարողացել դա անել: Պետք է իմ եւ իմ ընտանիքի հետ առնչություն ունեցող միջավայրում նման իրադարձություն հնարավոր լիներ: Ես ինձ չեմ ներում, ու չգիտեմ ոնց պիտի ներում հայցեմ:

Այս պահին ես հայտարարում եմ, որ բարոյական պարտավորություն եմ զգում եւ վայր եմ դնում Ազգային Ժողովի պատգամավորի իմ մանդատը: Ես ներողություն եմ խնդրում իմ բոլոր ընտրողներից, որ չեմ կարողանա արդարացնել իրենց սպասելիքները, բայց վստահ եմ, որ ուղղակի պարտավոր եմ այս քայլն անելու: Ուզում եմ հավատալ, որ ավանցիներն ինձ ճիշտ կհասկանան: Հույս ունեմ, որ մի օր էլ կկարողանամ ներում ստանալ Վահենց ընտանիքում. համենայն դեպս ամեն ինչ կանեմ դրա համար:

Սգում եմ բոլոր հարազատների հետ միասին:

## «Արմավիան» չի վաճառվում

**Gazeta.ru կայքի փոխանցմամբ՝ գործարար, նախկին պատգամավոր Հարություն Փամբուկյանը ցանկանում է գնել «Արմավիա» ավիաընկերությունը Միխայիլ Բաղդասարովից: Ըստ աղբյուրի՝ ազգային ավիափոխադրողը ֆինանսական խնդիրներ ունի, իսկ «Ռոսավիացիան» ցանկանում է առավել ընդարձակել հայկական շուկան ռուսական ավիաընկերությունների առաջ, հետեւաբար սա շահավետ գործարք կլինի կողմերի համար: ««Արմավիան» գնելու առաջարկն արել է Փամբուկյանը: Նա իր մոսկովյան գործընկերների հետ ավիաընկերության ձեռքբերման համար առաջարկում է 55 միլիոն դոլար», գրում է թերթը՝ չցանկանալով բացահայտել ակտիվների հավակնող ռուս ներդնողների անունները: Չի բացառվում, որ «Արմավիան» կվաճառվի մինչեւ տարեվերջ»:**



**Երեկ այս հրապարակմանը հումորով վերաբերվեցին «Արմավիա» ավիաընկերությունում: «Ազգ»-ի հետ հեռախոսազրույցում «Արմավիայից» ասացին, որ լուրերը չեն համապատասխանում իրականությանը, «Արմավիան» չի վաճառվում, եւ իրենց համար անհասկանալի է, թե ինչու են նման լուրեր տարածում: «Արմավիան» շարունակում է իր աշխատանքը, եւ վաճառքի մասին որեւէ խոսակցություն երբեւէ չի եղել:**

**Հիշեցնենք, որ «Արմավիան» Հայաստանի միակ ավիաընկերությունն է: Ավիափոխադրողի օդային պարկը կազմված է 3 Airbus A319-ից, 3 Airbus A320-ից, 3 CRJ-200LR-ից, 1 Յակ-42-ից 1 Sukhoi Superjet 100-ից: Վերջերս «Արմավիան» լուրջ խնդիրներ ուներ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի հետ: Ավիաընկերությունը պարտքեր էր կուտակել, ինչի հետեւանքով օդանավակայանը հրաժարվում էր ազգային փոխադրողին թռիչքուղի տրամադրել: Մի քանի օր տեւած բանակցություններով «Արմավիա»-«Զվարթնոց» վեճը կարծես թե լուծվեց:** Հ. Հ.

## Ասադ. «Կարծեցինք, թե ռազմօդանավը իսրայելական է»

Սիրիայի նախագահ **Բաշար Ասադը** թուրքական «Ջումհուրիեթ» թերթին տված հարցազրույցում ափսոսանք է հայտնել հունիսի 22-ին Սիրիայի ափերի մոտ թուրքական F-4 հետախուզական ռազմօդանավի ոչնչացման կապակցությամբ: Նա ասել է, որ թուրքական F-4-ը Սիրիայի օդային տարածք էր ներխուժել այն միջանցքով, որ ոչ հեռավոր անցյալում երեք անգամ օգտագործել էր իսրայելական օդուժը:

Այդ շրջանում տեղաբաշխված սիրիական հակաօդային պաշտպանության ստորաբաժանումները կրակ էին բացել՝ չիմանալով օդանավի պատկանելությունը: Սիրիայում միայն միջադեպից հետո էին հասկացել, որ խփել են ոչ թե իսրայելական, այլ թուրքական ռազմօդանավ: «Մենք ուրախ կլինեինք, եթե խփած լինեինք իսրայելական օդանավ», հայտարարել է Ասադը, ավելացնելով, որ սիրիացիները չէին կրակի թուրքական օդանավի վրա:

Ասադը ընդգծել է, որ ինքը թույլ չի տա թուրք-սիրիական բացահայտ պատերազմ եւ որ մեծ կարեւորություն չի տալիս սահմանի մոտ թուրքական զորքի կուտակմանը: Նախագահն ավելացրել է, որ նման պատերազմը շոշափելի վնաս կպատճառեր երկու պետություններին:

Սիրիայի ափերի մոտ թուրքական ռազմօդանավը խփվեց հունիսի 22-ին: Սիրիական աղբյուրները հաղորդեցին, որ օդանավը դանդաղ թռչում էր փոքր բարձրության վրա: Անկարան շարունակում է պնդել, որ թուրքական F-4-ը պատահաբար է մտել Սիրիայի օդային տարածք եւ որ սիրիական հակաօդային պաշտպանության ուժերը կրակ են բացել, երբ օդանավը իբր եղել է չեզոք ջրերի վրա:

## Զբաղվածությունը կկանխի անչափահասների հանցագործությունները

Միայն հունիս ամսին ոստիկանությունում գրանցվել է անչափահասների կողմից մարմնական վնասվածք հասցնելու 17 դեպք: Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 3-րդ վարչության պետի տեղակալ, անչափահասների գործերով բաժնի պետ **Նելլի Դուրյանը** նշում է՝ հասկապես ամռանը երեխաներին իրավախախտումներից զերծ պահելու համար պետք է լուծել նրանց զբաղվածության հարցը: Նրա տվյալներով՝ անչափահասների իրականացրած իրավախախտումներից 16-ը



կատարվել են հասարակական վայրերում, իսկ 6 դեպքերի ժամանակ անչափահասների մոտ հայտնաբերվել են սառը կտրող գործիքներ:

Ոստիկանության բոլոր ծառայությունները, ըստ Նելլի Դուրյանի, հասարակական վայրերում միշտ ուշադրության կենտրոնում են պահում անչափահասներին:

Երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ Նելլի Դուրյանը հավելեց, որ հանցագործության գնում են հիմնականում այն երեխաները, որոնք ակտիվ են, բայց միեւնույն ժամանակ մատնված են անուշադրության, եւ առանց ծնողների հետ աշխատելու հնարավոր չէ ուղղել երեխայի վարքը, որովհետեւ 10 դեպքերից 9-ի ժամանակ երեխայի հասարակական արարքի պատճառը բխում է ընտանիքից:

2012 թվականի դրությամբ՝ հաշվառման մեջ գտնվող անչափահասների թիվը 400 է: Իսկ ընդհանուր առմամբ՝ Հայաստանում անչափահասների հանցագործության ամենացածր տոկոսը գրանցվել է Վայոց Ձորի մարզում: Ի. Պ.

## Լավ առիթ է, որ Թուրքիան ուսումնասիրի Հայոց ցեղասպանությունը

*Քանի միլիոն կամ միլիարդ տարվա բանտարկություն է հասնում Հայոց ցեղասպանության համար*

**Անդրադառնալով Թուրքիայի դատարաններից մեկի կողմից մեղադրական ակտ հարուցելուն ընդդեմ չորս իսրայելցի հրամանատարների, որոնք 2010-ին դեր են ունեցել ինը թուրք ակտիվիստների սպանության մեջ («Մավի Մարմարայի» միջադեպը), «Նեշնըլ փոստ» պարբերականի մեկնաբանությունների բաժնի խմբագիր, «Ժողովրդավարության պաշտպանության հիմնարկության» անդամ Ջոնաթան Քեյը գրում է, որ յուրաքանչյուրին 8-18 հազար տարվա բանտարկություն նախատեսող ակտը «բավական շատ է հատկապես հաշվի առնելով, որ ՄԱԿ-ի եզրափակիչ զեկույցը թուրք «ջիհադների» դեմ գործադրված ուժային միջոցները» ընդհանուր առմամբ օրինական էր համարել:**

**Պատկերացրեք, քանի՞ միլիոն տարիների բանտարկություն էր հասնելու, եթե իսրայելական բանակը իրոք հրեշավոր մի գործողություն կատարած լիներ, ինչպես, օրինակ, օսմանյան թուրքերի կողմից մեկ միլիոնից ավելի հայերի սպանությունը Առաջին համաշխարհայինի օրերին: Հայոց ցեղասպանության թուրք «ճարտարապետներին» երեւի 800 միլիոնից 1,8 միլիարդ տարիների բանտարկության կհասներ:**

**Ավաղ, նրանք բոլորն էլ հրաժեշտ են տվել այս երկրային կյանքին: Շատերը իրենց անկողնում, բոլորովին ոչ նման այն հայ տղամարդկանց եւ կանանց, որոնք անպաշտպան կոտորվեցին սովից ու հիվանդություններից՝ կրծքերին ամուր սեղմած իրենց երեխաներին՝ անասնալիական շրջաններից բռնագաղթի ճամբարներում:**

**Համարյա մեկ դար անց թուրք պաշտոնական այրերը սովորական «տեղափոխություն» են անվանում կատարվածը: Շատ ուրիշ պետություններ եւս «սվաղել» են իրենց անցյալի պատմությունը: Ռուսական դասագրքերում, օրինակ, չեք գտնի տողեր Ստալինի սարսափելի ոճիրների մասին: Չինաստանի պարագայում՝ Տիբեթի մասին: Բայց այս երկրները առնվազն չեն հավակնում, ինչպես Թուրքիան է հավակնում, լինել մարդու իրավունքների եւ միջազգային օրենքի պաշտպան պետություններ:**

**Եթե Թուրքիան նախաձեռնում է Իսրայելին կամ որեւէ ուրիշ մեկին դաս տալ «մարդկության դեմ գործած ոճիրների» մասին, ապա լավ կլինի սկսի՝ ընդունելով այն էթիկական սարսափները, որ պատճառել է հայերին եւ այլ փոքրամասնություններին: Նույնիսկ այդ դեպքում թուրքական ակտը Իսրայելի դեմ քիչ արժեք կունենա, բայց գոնե կեղծ բարեպաշտության գարշահոտությամբ չի տառապի», եզրակացնում է Ջոնաթան Քեյը՝ ավելացնելով, որ իսկական ժամանակն է թուրքերի համար՝ ուսումնասիրելու Հայոց ցեղասպանությունը:**

**Հոդվածում նա խոսում է նաեւ «Պրինսթոն» համալսարանի հրատարակչության կողմից վերջերս հրատարակված Թաներ Աքչամի «Երիտթուրքերի ոճրագործությունն ընդդեմ մարդկության. Հայոց ցեղասպանությունը եւ էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում» գրքի մասին, որտեղ բերված են փաստեր, թե ինչպիսի ճշգրտությամբ էին թուրքերը հաշվառման ենթարկել եւ խմբավորել հայերին, հույներին, քրդերին եւ այլոց, որպեսզի հետագայում իրագործեին իրենց հրեշային գործողությունները:**

**Հոդվածը արտատպվել է «Արմինըն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթում, որտեղից էլ կատարել ենք թարգմանությունը քաղվածաբար:** Հ. Ծ.

# Այս տարի բողոքարկում տեղի չունեցավ ընդունելության քննություններում

Օրեր առաջ ավարտվեց միասնական քննության առաջին փուլը, որն, ի տարբերություն նախորդ տարիների, անցավ ավելի հանգիստ: «**Ազգ**»-ը զրուցեց Գնահատման եւ թեստավորման կենտրոնի մամուլի խոսնակ **Գայանե Մանուկյանի** հետ, որն ամփոփեց միասնական քննությունների առաջին փուլը. «Հունիսի 22-ին եզրագիծը հատեց միասնական քննությունների առաջին եւ հիմնական փուլը, դիմում-հայտ էր ներկայացրել 18107 դիմորդ՝ ներառյալ ԼՂՀ-ն: Ինչպես ԶԼՄ-ներն են արձանագրում, այս տարվա միասնական քննություններն անցան հեշտ:



Սովորաբար սեպտեմբերին ԳԹԿ-ն մեծ խորհրդակցություններ է անցկացնում քննությանն առնչվող պատասխանատուների հետ, որի ընթացքում քննարկվում են այն բոլոր առաջարկները, որոնք քննությունների ընթացքում հնչել են կամ ինչին բախվել է ԳԹԿ-ն: Օրինակ՝ 2010թ. մի շարք ծնողներ դիմեցին ԳԹԿ-ին, որպեսզի վերահայտագրում կատարենք, սակայն այդ ժամանակ օրենքը թույլ չէր տալիս, եւ ահա այս տարի այդ օրենքը կիրառվում է: Ըստ որի՝ հիմնական մրցույթից դուրս մնացած, սակայն դրական միավորներ ստացած դիմորդները կդիմեն թափուր մնացած մասնագիտությունների համար, եթե մինչ այդ հանձնել են միասնական քննություն այդ առարկայից եւ ստացել դրական միավոր, որը բնավ չի նշանակում վերահանձնել քննություն»:

Քննությունների մեկնարկից առաջ կառավարությունը տվեց «կանխատեսելի քննություններ» ձեւակերպումը, ըստ որի երկու քննություն՝ հայոց լեզու-հայ գրականություն եւ մաթեմատիկա առարկաներն անցան շտեմարանային համակարգի, որն իր լավ արդյունքը տվեց:

Անդրադառնալով շտեմարաններին՝ Գայանե Մանուկյանն ասաց, որ տարեցտարի համալրվելու է դրանց ցանկը, որը պարունակում է 5 հազար առաջադրանք:

Ինչ վերաբերում է ԿԳ փոխնախարար **Մանուկ Մկրտչյանի** ելույթին, որն ասել էր, որ եթե շտեմարանային համակարգի անցումը իրեն արդարացնի եւ լավ արդյունք ստանան, ապա մնացյալ բոլոր առարկաները եւս կանցնեն շտեմարանային համակարգի, Գ. Մանուկյանից ճշտեցինք, որ դեռ հստակեցված չէ այդ հարցը:

Նախքան քննությունների մեկնարկը դիմորդներն արդեն ծանոթ էին քննակարգին ֆիլմի միջոցով, որը տեղադրված է ոչ միայն Գնահատման եւ թեստավորման կենտրոնի կայքում, այլեւ հեռարձակվում է տարբեր հեռուստաընկերությունների միջոցով, ԳԹԿ-ն նաեւ այդ սկավառակները ուղարկել է բոլոր դպրոցներին, այսինքն՝ ԳԹԿ-ն դիմորդների համար ստեղծում է բոլոր հնարավորությունները, որպեսզի նրանք տան լավ քննություններ եւ կանխավ իրազեկված լինեն:

Գ. Մանուկյանը նշեց, որ այս տարի որեւէ լուրջ միջադեպ չի արձանագրվել, քանի որ այս տարվա դիմորդները ավելի լուրջ են, քննասենյակներում տիրում էր կատարյալ հանդարտություն, ի տարբերություն մոնիտորների սենյակի, որտեղ ծնողներն ուղղակի խառնաշփոթ էին ստեղծում՝ դրանով իսկ խանգարելով իրենց իսկ երեխաներին:

Անդրադառնալով զվարճալի դեպքերին՝ Կ. Մանուկյանն ասաց, որ քննություններից մեկի ժամանակ, երբ դիմորդներից մեկը դուրս է եկել քննասենյակից, ծնողները հարձակվել են նրա վրա, ձեռքից խլել ձեւաթուղթը, սկսել են արտագրել եւ նամակ ուղարկել քննասենյակում գտնվող իրենց երեխաներին՝ չգիտակցելով, թե արդյոք այդ պատասխանները ճի՞շտ են, կամ համընկնո՞ւմ են իրենց երեխայի եւ այդ երեխայի տարբերակները:

Այս տարվա քննությունները առանձնացան նրանով, որ բողոքարկումներ տեղի չունեցան:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Բոհջալյանի նոր գիրքը պատմական անցյալն է բացահայտում




Մեկ տասնյակից ավելի վեպերի հեղինակ **Քրիս Բոհջալյանի** նոր՝ **«Ավազե ամրոցի աղջիկները»** («The Sandcastle Girls») խորագրով հատորը ամբողջովին տարբերվում է նրա նախորդ գործերից, որոնցում շատ հպանցիկ էր անդրադարձել իր հայկական ժառանգությանը: Նոր գրքում, ըստ «Արմինյըն միրոր-սփեքթեյթըրի» գրախոս **Դեֆնի Աբիլի**, նա պատմական շրջադարձ է կատարում դեպի իր արմատները, դեպի հայ պապի (գրքում՝ Արմեն Պետրոսյան) եւ բրահմայականության հետեւորդ ամերիկացի տատի (գրքում՝ Էլիզաբեթ Էնդիքոթ) կյանքի դրվագները: Նրանք իրար հանդիպում են Հալեպում՝ 1915-ի ողբերգական իրադարձությունների ու մահվան տարագրությունների թոհուբոհում:

Էլիզաբեթը Հալեպ է ժամանել հոր՝ Սայլըսի հետ, մարդասիրական աշխատանք իրականացնելու «Հայերի բարեկամները» ընկերության հովանավորության ներքո: Սիրիայում սրտաճմլիկ տեսարան է՝ սովալլուկ երեխաներ, կմախքի արտաքինով կանայք, մահվան եզրին հասած ծերունիներ:

Արմենը ինժեներ է, որին հաջողվում է բրիտանական բանակի զինվոր դառնալ եւ Հալեպ հասնել՝ հույս չունենալով, սակայն, գտնելու իր կնոջը՝ Կարինեին, եւ դստերը, որոնք, իր կարծիքով, սպանված պետք է լինեին Վանից՝ իրենց ծննդավայրից բռնագաղթելու ճանապարհին: Էլիզաբեթն ու Արմենը սիրահարվում են միմյանց... Բայց պարզվում է, որ Արմենի կինը՝ Կարինեն, ողջ է: Վեպում կան նաեւ այլ կերպարներ, մասնավորապես մի գերմանացի սպա, որ հիշեցնում է Արմին Վեգներին: Լուսանկարելու պահին նրանից թուրքերը խլում են ապարատը եւ առգրավում:

«Գիրքն ազդեցիկ է, որովհետեւ հեղինակը լավ է ուսումնասիրել պատմական անցյալը եւ համոզիչ կերպով է նկարագրել հայերի հետ կատարվածը», գրում է Դեֆնի Աբիլը: «Դա մեծ մասամբ բոլոր հայերի պատմությունն է, եւ վեպը պետք է որ մեծ արձագանք գտնի հայկական համայնքում:

Ճիշտ է, իր նախորդ վեպերի խճճված սյուժեներն այստեղ չկան, սակայն հյուսված ողբերգությունները, հաջողություններն ու մարդկային հարաբերությունները հավաստի են եւ գիրքը դարձնում են գրավիչ ու հետաքրքրական»:

Հ. Ծ.



# Բուժում՝ արվեստի միջոցով

**Դեռեւս մ.թ.ա. 6-րդ դարում պյութագորականները երաժշտությունն օգտագործում էին որպես հիվանդությունների բուժման արդյունավետ միջոց: Այս ծիրի մեջ հետագայում ներառվեցին նաեւ արվեստի մյուս տեսակները: Նոր ժամանակներում, սակայն, կարծես մոռացվեց այդ ավանդույթը, եւ առաջին պլան մղվեցին զանազան դեղամիջոցներն ու քիմիական պրեպարատները: Բարեբախտաբար, վերջին տարիներին վերականգնվում է մոռացված այդ սովորույթը, եւ զարգացած երկրներից շատերի բուժհիմնարկություններն այսօր հաճախ պատկերասրահներ ու երաժշտասրահներ են հիշեցնում:**



**Մեզանում եւս առաջատար մի քանի բուժհաստատություններ արդեն որդեգրել են ապաքինման այս ոճը, որը մեծապես նպաստում է բուժման արդյունավետության բարձրացմանը: Դրանցից մեկը ԵՊԲՀ «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի քիմիաթերապիայի կլինիկան է, որի պատերին այցելուն կարող էր տեսնել Հայաստանի եւ արտերկրի տեսարժան շատ վայրեր պատկերող լուսանկարներ: Վերջիններիս թիվը երեկ ավելացավ եւս քսանով, որոնց հեղինակները արտասահմանցի հայտնի լուսանկարիչներ են:**

**Նման նախաձեռնության հեղինակը չիկագոյաբնակ մեր հայրենակից Քրիստին Մխիթարյանն է, որը հայտնի է ինտերիեր-դիզայնի եւ արվեստաբուժության ոլորտում: Հայ օգնության ֆոնդի եւ «Լուսանկարչական արվեստը բուժհաստատություններում» հիմնադրամի համագործակցությամբ նկարները հասան Հայաստան եւ այժմ տեղ են գրավում հիշյալ կլինիկայի հիվանդասենյակներում ու միջանցքներում: Ինչպես իր շնորհակալական խոսքում նշեց կլինիկայի ղեկավար, դոցենտ Սամվել Դանիելյանը, իրենք տպավորված են նման ուշադրությունից եւ կփորձեն առաջիկայում եւս դեղերին զուգահեռ օգտվել արվեստի բուժիչ ուժից: Ավելացնենք, որ չի բացառվում նման մեթոդի կիրառումը նաեւ Երեւանի եւ ՀՀ մարզային այլ բուժհաստատություններում:**

ԼԵՎՈՆ ԼԱԾԻԿՅԱՆ

# «Փոխվել է հաշմանդամների հոգեբանությունը»

**Հայաստանում կա մոտավորապես 178 հազար հաշմանդամ, եւ նախորդ տարիների համեմատությամբ՝ հաշմանդամների իրավունքներն այսօր ավելի պաշտպանված են:**

**«Փյունիկ» հաշմանդամների միության նախագահ Հակոբ Աբրահամյանն ասում է, որ հաշմանդամների համար առաջնային խնդիրը մնում է միջավայրի անմատչելիությունը, ինչի հետեւանքով առաջ են գալիս նաեւ ուրիշ խնդիրներ: Այնուամենայնիվ, վերջին երկու տասնամյակի ընթացքում դրական փոփոխություններ եղել են: Եթե նախկինում հաշմանդամներն ամաչում էին հասարակության մեջ դուրս գալ, ապա այսօր նրանցից շատերն ունեն աշխատանք ու զբաղմունք, փոխվել է հաշմանդամների հոգեբանությունը», երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ հավելեց Հակոբ Աբրահամյանը:**

**Հաշմանդամների խնդիրներն առկա են ոչ միայն Հայաստանում, այլեւ ողջ աշխարհում, սակայն որոշ երկրներում դրանք ստանում են լուծում, որոշներում՝ ոչ: Այստեղ դրանց լուծմանը կնպաստի հաշմանդամների՝ հասարակության մեջ ինտեգրումը: Տրանսպորտի ոլորտի խնդիրների լուծման վերաբերյալ մշակվել է ծրագիր, որը, Հակոբ Աբրահամյանի փոխանցմամբ, շուտով ներկայացնելու են Երեւանի քաղաքապետին:**

**Հակոբ Աբրահամյանը լրագրողներին նաեւ տեղեկացրեց, որ նախագահ Սերժ Սարգսյանի հիմնադրամից հատկացվել է 9 միլիոն դրամ գումար շուրջ 100 հաշմանդամ երեխաների ակտիվ հանգիստը Սեւանում կազմակերպելու համար:**

Ի. Պ.

# Երեխա հովանավորիր Սպիտակում ամառային ճամբարի համար

Սպիտակում գործող «Կամավորների մշակութային միջազգային կենտրոն» ոչ շահութաբեր կազմակերպությունը կոչ է անում մեկ կամ մի քանի երեխաներ հովանավորել հուլիս-օգոստոս ամիսներին Սպիտակում անցկացվող ամառային ճամբարին մասնակցելու համար: Մեկ երեխայի մեկ օրվա հովանավորությունը արժե տասը դոլար: Հավելյալ նվիրատվությունները ողջունելի են: Գումարը ներառելու է ճամբարում ժամանակ անցկացնելու, ճաշերից օգտվելու, ժամը 08-18-ը խաղերին եւ ուսումնական ծրագրերին մասնակցելու ծախսերը: Նպատակն է երեխաներին հեռու պահել փողոցներում աննպատակ թափառումներից, ծխելու, խմելու եւ ձանձրույթի ազդեցություններից:

Հավելյալ մանրամասնությունների համար դիմել պրոֆ. Վահան Համազասպյանին (հեռ. + 374 - 93 35 95 53) կամ այցելել vaskenconsulting@aol.com կայքը:

Հ. Ծ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 375010 Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Կհաստատվի օֆշորային երկրների ցանկը

## *Պայմանավորված շահութահարկի օրենքի փոփոխությամբ*

Կառավարությունը այսօր կսահմանի օֆշորային գոտիների (երկրների) ցանկը, որը կտարածվի 2012 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա: Հարկման արտոնյալ ռեժիմներ ունեցող պետությունների կամ դրանց մասը կազմող տարածքների ցանկը սահմանված է եղել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականին ընդունած որոշմամբ: Այս փոփոխությունը պայմանավորված է «Շահութահարկի մասին» օրենքում կատարված փոփոխությամբ:

Մասնավորապես, օրենքը լրացվել է նոր պարբերությամբ, ըստ որի, հարկ վճարողների կողմից օֆշորային գոտիներում գրանցված (հաշվառված) կազմակերպություններից ապրանքների կամ հիմնական միջոցների ձեռքբերման համար, այդ գոտիներում գրանցված (հաշվառված) կազմակերպություններին կատարված կանխավճարների դիմաց արդյունքը կանխավճարի կատարման օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում չստացվելու դեպքում, կատարված կանխավճարների նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով: Ինչն էլ անհրաժեշտություն է առաջացրել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվի օֆշորային գոտիների (երկրների) ցանկը: Որոշման նպատակն է սահմանափակել հարկումից խուսափելու հնարավորությունները:

Որոշմամբ սահմանված օֆշորային գոտիները (երկրները) հետեւյալն են՝ Անդորա, Անթիլյան կղզիներ (Նիդեռլանդներ), Անտիգուա եւ Բարբուդայի Պետություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներից՝ Գուամ կղզի, Դելավեր նահանգ, Պուերտո Ռիկոյի Համագործակցություն, Վայոմինգ նահանգ, Վիրջինյան կղզիներ, Օրեգոն նահանգ, Արուբա կղզի (Նիդեռլանդներ), Բահամյան կղզիների Համագործակցություն, Բահրեյնի Թագավորություն, Բարբադոս, Բելիզ, Բրունեյ-Դարուսսալամ Պետություն, Գայանա, Գվադելուպա, Գվատեմալա, Գրենադա, Դոմինիկայի Համագործակցություն (Դոմինիկա կղզի), Դոմինիկյան Հանրապետություն (Հաիթի կղզի), Թանժեր (Մարոկկոյի Թագավորություն), Թոնգայի Թագավորություն, Իռլանդիայի Հանրապետությունից՝ Դուբլին եւ Շաննոն քաղաքներ, Լաբուանի Դաշնային Տարածք (Մալայզիա), Լիբանան, Լիբերիա, Լիխտենշտեյն, Լյուքսեմբուրգ, Կամարյան կղզիներ (Ֆեդերալ Իսլամական Հանրապետություն), Կանարյան կղզիներ (Իսպանիայի Թագավորություն), Կիպրոս, Կուկի կղզիներ (Նոր Զելանդիա), Կոստա Ռիկա, Սյանգան (Հոնկոնգ) (Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հատուկ վարչական շրջան), Ճամայկա, Մադեյրա կղզի (Պորտուգալական տարածք), Մալդիվներ, Մալթա, Մական (Աոմին) (Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հատուկ վարչական շրջան), Մավրիկիա, Մավրիտանիա, Մարիանյան կղզիներ, Մարշալյան կղզիներ, Միացյալ Արաբական Էմիրություններից՝ Դուբայ քաղաք, Միացյալ Թագավորության անդրծովյան տարածքից՝ Անգիլիա կղզի, Բերմուդյան կղզիներ, Թերքս եւ Կայքոս կղզիներ, Կայմանյան կղզիներ, Հարավային Գեորգիա կղզի, Հարավային Սանդվիչյան կղզի, Մեն կղզի, Մոնտսերատ, Նորմանդյան կղզիներ (Ջերսի եւ Հերնսի կղզիներ, Սարկ, Օլդերն), այնուհետեւ՝ Ջագոս կղզի, Ջիբրալթար, Վեստ Ինդիա, Վիրջինյան կղզիներ, Միացյալ Մյանմայի Հանրապետություն, Միկրոնեզիա, Մոնակոյի Իշխանություն, Նաուրու, Նիգերիա, Նիուե կղզի (Նոր Զելանդիա), Շվեյցարիա, Շրի Լանկա, Ջերնզորիա, Պալաու, Պանամա, Ջիբութի, Սամոա, Սան Մարինո, Սեյշելյան կղզիներ, Սենթ Լյուսիա կղզի, Սենթ Վինսենթ եւ Գրենադիններ, Սենթ Քիթս եւ Նեւիս Դաշնություն, Սինգապուր, Սուրինամ, Վանուատու, Տանզանիա, Տրինիդադ եւ Տոբագո, Ուրուգվայ, Քամերունե, Ֆիլիպիններ, Ֆիջի, Ֆրանսիայի Հանրապետությունից՝ Ֆրանսիական Գվիանա, Կերգելեն կղզի, Ֆրանսիական Պոլինեզիա:

**Ա. Ս.**

# Wi-Fi տեխնոլոգիայի կիրառումը կնպաստի կրթության որակի բարձրացմանը

## *ՎիվաՍել-ՄՏՍ-ն համակարգչային լսարան եւ Wi-Fi հանգույցներ է ստեղծել Գիտությունների ազգային ակադեմիայի միջազգային գիտակրթական կենտրոնում*

**ՎիվաՍել-ՄՏՍ-ի կողմից որպես նվիրատվություն հանձնված՝ «Home-Zone Turbo» փաթեթի շրջանակում գործող 3G երթուղիչի շնորհիվ, կենտրոնում բացված համակարգչային սենյակում այժմ տասը համակարգիչ ապահովված են ընկերության տրամադրած ինտերնետով: «Home-Zone Turbo» փաթեթով գործող եւս մեկ Wi-Fi հանգույց է հիմնադրվել Միջազգային գիտակրթական կենտրոնի կոնֆերանս-դահլիճում: Կենտրոնի խնդրանքով ՏՏ լաբորատորիային տրամադրվել է նաեւ մեկ ինտերակտիվ գրատախտակ՝ իր լուսարձակով: Գիտությունների ազգային ակադեմիայի միջազգային գիտակրթական կենտրոնում ընդհանուր առմամբ արվել է 3,5 մլն դրամի ներդրում:**

**Բարձրագույն կրթական հաստատություններում Wi-Fi անկյուններ ու հանգույցներ, ինչպես նաեւ համակարգչային լսարաններ ստեղծելու գաղափարը նպատակ ունի օգնելու բուհերին իրենց ուսանողների եւ դասախոսական անձնակազմի համար ստեղծել իրապես «անսահմանափակ» հաղորդակցության հնարավորություն: Wi-Fi տեխնոլոգիան համարվում է կրթական հաստատությունում շարժական արագ ինտերնետ հասանելիություն ապահովելու ամենաարդյունավետ միջոցը: Այսպես, օրինակ, գերարագ Wi-Fi կապը թույլ կտա դիտել հանրահայտ դասախոսների արտասահմանում կարդացված դասախոսությունները, ինչպես**



**նաեւ շփվել արտասահմանցի ուսանողների եւ գործընկերների հետ՝ ցանկացած վայրում եւ ցանկացած պահի:**

**«Մեր ցանկությունն է Հայաստանի բուհերը տեսնել աշխարհի համալսարանների հետ հավասար քայլելիս: Արտասահմանում Wi-Fi-ը համարվում է ինտերնետ կապի առաջնային միջոց: Wi-Fi կապի առկայությունը պարտադիր պայման է կրթական ռեսուրսները տեխնոլոգիաների հետ համատեղելու առումով: Այդ է պատճառը, որ ՎիվաՍել-ՄՏՍ-ը շարունակաբար աջակցում է բուհերին կրթական ոլորտում Wi-Fi տեխնոլոգիայի լայն կիրառման հարցում», ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

**Անկյունների ստեղծման շնորհիվ բուհերի ֆակուլտետների միջեւ եւ արտաքին աշխարհի հետ հնարավոր է դառնում ապահովել անխափան եւ արագ կապ: Wi-Fi անկյունները թույլ կտան տարատեսակ անլար միացմամբ սարքեր օգտագործողներին օգտվել ցանցի ընձեռած լայն հնարավորություններից:**

### Երախտիքի խոսք

Խորին երախտագիտությունս եմ հայտնում ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանին՝ իմ առողջական խնդիրների լուծման նպատակով նրա դրսեւորած մարդասիրության եւ հասկացված ֆինանսական աջակցության համար:

**ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Վանաձոր**

## ԼՈՒՐԵՐ

# Կրկին մախոխում են... շփման գծի վրայով

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ռոբերտ Բրադկեն, Ժակ Ֆորն ու Իգոր Պոպովը, ինչպես նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկը հուլիսի 10-ին կայցելեն Բաքու: Այս մասին «Ազերիպրես» գործակալության մոսկովյան թղթակցին հայտնել է ռուսաստանցի համանախագահ **Իգոր Պոպովը**:

Նրա տեղեկացմամբ, այնուհետեւ համանախագահները կայցելեն Լեռնային Ղարաբաղ, տարածաշրջան այցելության ավարտին՝ Երեւան:

Պոպովը նաեւ տեղեկացրել է, որ նախատեսված են հանդիպումներ Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների, արտգործնախարարների հետ՝ քննարկելու փարիզյան հանդիպման արդյունքներն ու ներկա վիճակը, հակամարտության բանակցային գործընթացի հեռանկարները: **Ա. Հ.**

# Կամովին ներկայացած զորակոչիկ մեղադրյալների խափանման միջոց կալանավորումը կփոխվի

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ապրիլի 23-ին հրամանագիր էր ստորագրել 2012թ. մայիս-հունիս ամիսներին պարտադիր զինվորական եւ այլընտրանքային ծառայությունների գարնանային զորակոչ անցկացնելու եւ զորացրում կատարելու մասին: ՀՀ զինված ուժեր են զորակոչվելու արական սեռի այն քաղաքացիները, որոնց 18 տարին լրացել է մինչեւ զորակոչի օրը, ինչպես նաեւ 27 տարին չլրացած այն քաղաքացիները, ովքեր կորցրել են նախկինում ստացած պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքը:

Ոստիկանությունում ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից խուսափելու փաստի առթիվ հարուցվել էր քրեական գործ, մեղադրյալների նկատմամբ հայտարարվել էր հետախուզում եւ որպես խափանման միջոց ընտրվել էր կալանավորումը:

Դատախազության մամուլի ծառայությունն «**Ազգ**»-ին ուղարկված հաղորդագրությունում տեղեկացնում է, որ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը մարզերի ու համայնքների դատախազներին ցուցում է տվել փոխել ընտրված խափանման միջոց կալանավորումը, դադարեցնել հետախուզումն ու քրեական հետապնդումն այն զորակոչիկ մեղադրյալների նկատմամբ, ովքեր զորակոչի ընթացքում կամովին կներկայանան ոստիկանություն կամ զինկոմիսարիատ եւ ցանկություն կհայտնեն ծառայելու ՀՀ զինված ուժերում: Քրեական հետապնդում չի իրականացվի նաեւ այն անձանց նկատմամբ, ովքեր «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքով նախատեսված կարգով ցանկություն կհայտնեն մեկնելու այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրեր՝ հայրենիքի առջեւ իրենց քաղաքացիական պարտքը կատարելու: **Հ. Հ.**

# Էլեկտրոնային հաշվետվություններին անցնելու համար

**Տարեկան մինչեւ 58,3 մլն շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտներին էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացմանն անցնելը խրախուսելու համար կառավարությունը այսօր կհաստատի զանգվածային իրազեկման եւ ուսուցման միջոցառումների կազմակերպման եւ դրանց կատարման ժամանակացույցը:**

**Համաձայն պետական եկամուտների կոմիտեի վերլուծության՝ ներկայումս կոմիտեի բազայում գրանցված են 172,3 հազ. տնտեսվարող սուբյեկտներ, որից 83,6 հազարը չգործող հարկատուներ են, 2,2 հազարը՝ զրոյական հաշվետվություն ներկայացնողներ, 14,6 հազարը՝ հաստատագրված վճար վճարող, մեկ հազարը՝ արտոնագրային վճար վճարողներ: Այս խմբերի կամավոր ընդգրկումն էլեկտրոնային հաշվետվությունների համակարգում անհնար է, քանի որ նրանք չեն ներկայացնում հարկային հաշվետվություններ ընդհանրապես կամ ամբողջ տարվա ընթացքում ներկայացնում են 1-4 հաշվետվություն: Էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ են ներկայացնում 8,8 հազար տնտեսվարող սուբյեկտներ (4,4 հազարը 2011-ին ունեին 58,38 մլն դրամից ավելի, 4,4 հազարը՝ 58,38 մլն դրամից պակաս տարեկան շրջանառություն):**

**Ակնկալվում է, որ 29,2 հազար տնտեսվարող սուբյեկտներ իրենց հաշվետվությունները կներկայացնեն էլեկտրոնային եղանակով: Այդպիսով նրանք հնարավորություն կստանան կրճատելու հաշվետվությունների համար պահանջվող ժամանակը եւ վարչարարական ծախսերը, ինչպես նաեւ օգտվելու խրախուսման որոշակի արտոնություններից:**

**Ա. Ս.**

# Երեք նոր մրցույթ

«Տաշիր» բարեգործական հիմնադրամը եւ «Պահանջում ենք գիտության ֆինանսավորման ավելացում» ֆեյսբուքյան նախաձեռնությունը հայտարարում են երեք նոր մրցույթ: Դրանցից մեկը նախատեսված է գիտության հարցերը լուսաբանող այն լրագրողների, հրապարակախոսների ու քաղաքացիների համար, որոնք 2012 թվականի մայիսի 10-ից մինչեւ նոյեմբերի 30-ը տպագիր կամ համացանցային մամուլում, բլոգներում, հեռուստատեսային ու ռադիոհաղորդումներում կամ այլ հարթակներում կանդրադառնան Հայաստանում գիտության ոլորտի հիմնախնդիրներին: Մրցույթին կարող են մասնակցել նշված ժամանակահատվածում առնվազն 10 նյութ հրապարակած հեղինակները, նյութերը նաեւ պետք է տեղադրված լինեն համացանցում:

Հաջորդ 2 մրցույթները հայտարարվում են Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ, դրանցից մեկը կլինի միջազգային պարբերականներում Հայոց ցեղասպանության մասին տպագրված գիտական հոդվածների համար, իսկ մյուս մրցույթը հայտարարվում է միջազգային առաջատար օրաթերթերում, շաբաթաթերթերում, հեռուստառադիոհաղորդումներում եւ ինտերնետային պարբերականներում հրապարակված նյութերի համար:

**Ի. Պ.**

ԱԶԳ

## Մտահոգություններ

# Պետության անկազմակերպ մոտեցումը գենետիկայի հանդեպ

4 տարի առաջ, երբ Արփինեն ծննդաբերել է իր դուստրը, մտքով չի էլ անցել, որ գոյություն ունի ֆենիլկետոնուրիա կոչվող հիվանդություն, ու դժբախտաբար իր դստեր մեջ որոշ ժամանակ անց հայտնաբերվելու է ֆենիլկետոնուրիա:

Արփինեի աղջիկը հիմա 4 տարեկան է, մինչեւ 6 ամսականն առողջական խնդիր չի ունեցել: «6 ամսական էր, երբ նկատեցի, որ չի կարողանում նստել, մարսողությունն էլ նորմալ չէր, անընդհատ թունավորվում էր», ասում է **Արփինեն**:

Երեխան նաեւ որեւէ արձագանք չի տվել իրերին ու գույներին: Արփինեն դիմել է բժիշկների, սակայն վերջիններս սկզբում չեն հասկացել՝ երեխայի հետ ինչ է կատարվում: Օրինակ՝ մի հիվանդանոցում բժիշկներից մեկը, չկարողանալով ախտորոշում տալ, միայն հետեւյալն է ասել՝ գնա ու հույսդ Աստծո վրա դիր:

«Մի տարի ու 6 ամիս չեմ հասկացել, թե աղջկաս հետ ինչ է կատարվում, տարբեր բժիշկների էի դիմում, երեխային տանում առողջարաններ, սակայն ոչինչ չէր փոխվում», պատմում է Արփինեն:

Երբ երեխան մի տարեկան ու 7 ամսական էր, Արփինեն դիմում է Հանրապետական բժշկական գենետիկայի կենտրոն, որտեղ 2 անալիզից հետո երեխայի մեջ հայտնաբերում են ֆենիլկետոնուրիա: Ախտորոշումից հետո երեխան անցնում է հատուկ սննդակարգի, նրան տալիս են դիետիկ կաթի փոշի, որից ստացված կաթը 6 ամիս խմելուց հետո արդեն սկսում է չոչ անել, ինչը մինչ այդ չէր կարողանում, մի տարի անց էլ սկսում է քայլել:

Արփինեն ասում է, որ երեխայի վիճակը շատ չէր վատթարանա, եթե բժիշկները ժամանակին ճիշտ ախտորոշում տային ու նշանակեին ճիշտ բուժում:

Այսօր Արփինեն արդեն գիտի, թե ինչ է պետք բուժման համար՝ դիետիկ սնունդ ու համապատասխան դեղորայք, սակայն Հայաստանի պայմաններում դրանք ապահովելը բնավ հեշտ չէ: Սակայն մինչ պայմաններից խոսելը անդրադառնանք հիվանդությանը:

Ֆենիլկետոնուրիան հազվադեպ ժառանգական հիվանդություն է, երեխային փոխանցվում է այն ժամանակ, երբ ծնողները կրողներ են կամ ծնողներից մեկը հիվանդ է, մյուսը՝ կրող:

«Եթե հայրն ու մայրը կրող են, ապա հավանականությունը, որ երեխան կժառանգի հիվանդությունը, 25 տոկոս է: Եթե ծնողներից միայն մեկն է հիվանդության կրողը, իսկ մյուսը ո՛չ կրող է, ո՛չ հիվանդ, ապա նրանց երեխան ծնվում է առողջ: Հիվանդությունը չի փոխանցվում շղթայված սեռով. ժառանգում են ե՛ւ աղջիկները, ե՛ւ տղաները», բացատրում է Հանրապետական բժշկական գենետիկայի կենտրոնի ղեկավար **Ալբերտ Մաթեւոսյանը**:

Ֆենիլկետոնուրիայի ժամանակ ֆենիլալանին ամինաթթուն կուտակվում է արյան մեջ ու ախտահարում մարդու տարբեր հյուսվածքները, հիմնականում՝ նյարդային համակարգը, ինչն էլ հանգեցնում է ծանր հետեւանքների՝ ցնցումային նոպաների, մտավոր հետամնացության եւ այլն:



Ֆենիլալանին ամինաթթուն կա յուրաքանչյուր մարդու մեջ, սակայն ֆենիլկետոնուրիայի դեպքում օրգանիզմում դա չի քայքայվում, ինչի հետեւանքով ամինաթթվի քանակը դառնում է նորմայից ավելի:

Հանրապետական բժշկական գենետիկայի կենտրոնում հիվանդները մասնագետների հսկողության տակ մնում են մինչեւ 18 տարեկան, սակայն կան շատ հիվանդներ, որոնք մեծ են 18 տարեկանից, եւ Ալբերտ Մաթեւոսյանի խոսքով՝ նրանց հետ շփում այլեւս չկա:

Ներկայումս Հայաստանում կազմված չէ հազվադեպ ժառանգական հիվանդությունների մասին վիճակագրություն, չկա վիճակագրական տվյալների բազա, որն անհրաժեշտություն է: Իսկ նման տվյալների բացակայության դեպքում հնարավոր չէ ճիշտ ու գրագետ կազմակերպել առողջապահությունը:

«Հիմա մեր կենտրոնի հսկողության ներքո են շուրջ 60 հոգի, չնայած սա ամբողջական թիվը չէ ողջ հանրապետությունում ֆենիլկետոնուրիայով հիվանդ մինչեւ 18 տարեկան անձանց», ասում է պարոն Մաթեւոսյանը:

Միայն մինչեւ 18 տարեկան հիվանդները կենտրոնից անվճար ստանում են դիետիկ կաթի փոշի, որն ապահովում է առողջապահության նախարարությունը, սակայն կան հիվանդներ, որոնց նորմալ կենսակերպի համար միայն կաթի փոշին բավարար չէ: Կա եւ դիետիկ սնունդ, որը բավականին թանկ արժե, իսկ անհրաժեշտ դեղորայքը Հայաստանում գտնելը գրեթե անհնարին է:

Ըստ Ալբերտ Մաթեւոսյանի՝ Հայաստանում այդ դեղորայքը չի արտադրվում, որեւէ երկրից չի էլ ներկրվում, քանի որ շատ թանկ արժե:

Արփինեն հավելում է, որ դեղորայքը հիվանդները կարողանում են ստանալ միայն Հայաստանից դուրս ապրող ծանոթ-բարեկամների միջոցով:

«Պատահում է, որ հիվանդների ծնողները խնդրում են արտասահմանում ապրող իրենց ծանոթներին՝ ուղարկել դեղորայքը, հետո այստեղ լավության կարգով վաճառում են միմյանց», ասում է Արփինեն:

Պետությունն Արփինեի դստեր հատկացնում է ամսական 18 հազար դրամ հաշմանդամության թոշակ, որը բավարարում է միայն մի քանի օրվա սննդին, այնինչ բժիշկները կարծում են, որ դիետիկ սննդակարգով սնվելու դեպքում երեխան կբուժվի:

Ֆենիլկետոնուրիայով հիվանդները կյանքի հենց առաջին օրվանից պետք է ստանան դիետիկ սնունդ. նախ նրանց կտրում են մոր կաթից եւ տալիս արհեստական կաթ, քանի որ մոր կաթը եւս պարունակում է ֆենիլալանին:

Եթե երեխան մեծանում է հսկողության ներքո ու հետեւում սննդակարգին, ապա զարգանում է նորմալ, առանց ֆիզիկական ու մտավոր խնդիրների: Սակայն նորմալ զարգանալու դեպքում էլ 18 տարեկանից հետո դարձյալ պետք է հետեւեն դիետիկ սննդակարգին, որպեսզի առողջ մնան:

Ալբերտ Մաթեւոսյանը պատմում է՝ լինում են դեպքեր, երբ ծնողներն անտարբեր են երեխայի բուժման հանդեպ: «Օրինակ՝ մի անգամ ախտորոշել ենք հիվանդությունը, սակայն ծնողը հրաժարվել է բուժումից՝ պատճառաբանելով, թե իմ երեխան առողջ է, ոչ մի բուժում էլ պետք չէ, առանց հասկանալու, որ տարիներ անց երեխան դառնալու է ծանր հիվանդ», ասում է պարոն Մաթեւոսյանը:

Ցույց տալու համար, թե ժառանգական հիվանդություններն ինչքանով են ազդում ժողովրդագրության վրա, Ալբերտ Մաթեւոսյանը նշում է, որ պաշտոնական տվյալներով՝ մանկական մահացությունների ու հիվանդացության 20-23 տոկոսը պայմանավորված է ժառանգական հիվանդություններով, իսկ նեոնատալ (նորածնային) մահացությունների ու հիվանդացության՝ 42-45 տոկոսը:

Ալբերտ Մաթեւոսյանը, որը նաեւ Նեյրոհերեդիտալ հիվանդությունների ասոցիացիայի նախագահն է, ասում է՝ իրենց ասոցիացիան մշակել է «Ազգային պլան» հազվադեպ ժառանգական հիվանդությունների վերաբերյալ ու ներկայացրել առողջապահության նախարարություն, սակայն նախարարությանը դա չի հետաքրքրում:

Երեւանում հիմա կատարվում է նեոնատալ սկրինինգ, (պասկերային-էկրանային հետազոտում)« որի շնորհիվ հնարավոր է ախտորոշել ֆենիլկետոնուրիան դեռեւս նորածինների մեջ: Ծնվելուց հետո առաջին 3 օրերի ընթացքում վերցնում են նորածնի արյունը եւ հետազոտությամբ որոշում արյան մեջ ֆենիլալանինի քանակը: Եթե ախտորոշվում է ֆենիլկետոնուրիա, ապա նորածնին անմիջապես վերցնում են հսկողության տակ: Սակայն ծրագիրն առայժմ ներդրված է միայն Հայաստանում:

Պարոն Մաթեւոսյանը տեղեկացնում է, որ նեոնատալ սկրինինգը Հայաստանում ներդրվեց շնորհիվ Ազգային ժողովի հանձնաժողովի նախագահ Արա Բաբլոյանի, սակայն դա պետք է ներառի ոչ միայն Երեւանը, այլեւ հանրապետության ողջ տարածքը:

Կանխարգելման մեթոդներից Գենետիկայի կենտրոնի ղեկավարը նշում է եւ պրենատալ (նախածննդային) ախտորոշման մասին, երբ պտղի հետազոտությունը կատարում են դեռեւս հղիության ընթացքում: Հաճախ, երբ պտղի մեջ հայտնաբերում են ֆենիլկետոնուրիա, հղիությունն ընդհատում են:

Հարցազրույցի վերջում զրուցակիցս հույս է հայտնում, որ առողջապահության նախարարությունը նոր նախարարի օրոք կդառնա ավելի պատասխանատու հազվադեպ ժառանգական հիվանդություններ ունեցողների հանդեպ ու կփոխի նախարարության՝ գենետիկայի հանդեպ ձեւավորված անտարբեր վերաբերմունքը:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «ՀՀ դրամի 20-ամյակ» տարբերանշանի էսքիզների ընտրության նպատակով անցկացվող հրապարակային մրցույթի կազմակերպման մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) հայտարարում է հրապարակային մրցույթ՝

«ՀՀ դրամի 20-ամյակ» (1993-2013) տարբերանշանի էսքիզի ընտրության համար:

Մրցույթին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԲ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի 6 հասցեով:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է 2012թ. օգոստոսի 13-ը, ժամը 17-00-ն:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2012թ. օգոստոսի 16-ը, ժամը 17-00-ն:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2012թ. օգոստոսի 20-ին ժամը 17-00-ն:

Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցումը տեղադրված է ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում **(www.cba.am)**:

Մրցույթին մասնակցելու ծանուցումը, ինչպես նա լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել ՀՀ ԿԲ-ի Դրամաշրջանառության կարգավորման վարչություն:

Հեռ.՝ +374 10 59 29 05, 56 16 55,
Ֆաքս՝ +374 10 56 74 23, +374 10 52 38 52
Էլ. փոստ՝ nuneteryan@cba.am, emission@cba.am

***ՀՀ ԿԲ հասարակության հետ կապերի ծառայություն***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին**

**Կրտսեր պաշտոններ / բաց մրցույթ /**

**1. Արաբկիրի ՀՏ Ստուգումների բաժնի հարկային տեսուչ – 1 հաստիք**

**2. Կենտրոնի ՀՏ Ստուգումների բաժնի հարկային տեսուչ – 1 հաստիք**

1-ից 2-րդ կետերում նշված պաշտոնները զբաղեցնող աշխատակիցները «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքով հարկային մարմնին վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացնում են ստուգումներ, հսկողական այլ աշխատանքներ, հարկային հաշվանցումների եւ /կամ/ վերադարձի, հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների վերադարձի հիմնավորվածության եւ օրենքով սահմանված այլ ուսումնասիրություններ, հարկ վճարողների ֆինանսա-տնտեսական գործունեության վերլուծություն:

Նշված պաշտոնները համալրելու համար կազմակերպվող բաց մրցույթին կարող են մասնակցել հարկային ծառայողները եւ ՀՀ կառավարության 2002թ. հոկտեմբերի 3-ի «Հարկային ծառայության պաշտոնում նշանակվելու համար անհրաժեշտ մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 2167-Ն որոշմամբ հաստատված մասնագիտությունների ցանկում նախատեսված մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն /պետական կամ արտոնագրված ԲՈՒՀ-ի/ ունեցող հաշվապահական հաշվառման իմացությամբ, անհրաժեշտ համակարգչային հմտություններով, վերլուծական մտածելակերպով, հայերենին տիրապետող ՀՀ քաղաքացիները:

**3. Մաշտոցի ՀՏ Ընթացիկ հսկողության N 2 բաժնի հարկային տեսուչ – 1 հաստիք**

3-րդ կետում նշված պաշտոնը զբաղեցնող աշխատակիցը իրականացնում է հարկային մարմնի կողմից վերահսկվող պետական եկամուտների ծրագրային /թիրախային/ առաջադրանքների կատարման նպատակով վերլուծություններ, գնահատումներ, գույքագրման, չափագրման եւ օրենքով սահմանված այլ հսկողական աշխատանքներ, ստուգումներ եւ ուսումնասիրություններ:

Նշված պաշտոնը համալրելու համար կազմակերպվող բաց մրցույթին կարող են մասնակցել հարկային ծառայողները եւ ՀՀ կառավարության 2002թ. հոկտեմբերի 3-ի «Հարկային ծառայության պաշտոնում նշանակվելու համար անհրաժեշտ մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 2167-Ն որոշմամբ հաստատված մասնագիտությունների ցանկում նախատեսված մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն /պետական կամ արտոնագրված ԲՈՒՀ-ի/ ունեցող հաշվապահական հաշվառման իմացությամբ, անհրաժեշտ համակարգչային հմտություններով, վերլուծական մտածելակերպով, հայերենին տիրապետող ՀՀ քաղաքացիները:

**4. Նոր Նորքի ՀՏ Տեղեկատվության եւ վերլուծության բաժնի հարկային տեսուչ – 1 հաստիք**

**5. Շենգավիթի ՀՏ Տեղեկատվության եւ վերլուծության բաժնի հարկային տեսուչ – 1 հաստիք**

4-ից 5-րդ կետերում նշված պաշտոնները զբաղեցնող աշխատակիցներն իրականացնում են հարկ վճարողների սպասարկում եւ իրազեկում, տվյալների մշակում, մուտքագրում, հաշվառում, անձնական հաշվի քարտերի վարում, կամերալ ուսումնասիրությունների անցկացում, հարկային պարտավորությունների փոխադարձ հաշվարկների ակտերի կազմում: Գնահատում են հաշվետվությունների, հաշվարկների, հայտարարագրերի եւ այլ տեղեկությունների՝ մեքենայական մշակման համար պիտանիության աստիճանը, մշակում եւ մուտքագրում են տվյալների բազա: Մուտքագրում են համակարգիչ հարկային հաշիվները, երրորդ անձանցից ստացված տվյալները, հարկ վճարողների աշխատանքային գործունեության դադարեցման եւ աշխատանքային գործունեության վերսկսման դիմումները: Կազմում են հաշվետվություններ չներկայացրած կամ ժամկետից ուշ ներկայացրած, ինչպես նաեւ հարկային պարտավորություններ ունեցող հարկ վճարողների ցանկերը:

**6. Արաբկիրի ՀՏ Իրավաբանական եւ հարկադիր գանձումների բաժնի առաջատար մասնագետ-1 հաստիք**

**7. Նոր Նորքի ՀՏ Իրավաբանական եւ հարկադիր գանձումների բաժնի առաջատար մասնագետ-1 հաստիք**

4-7-րդ կետերում նշված պաշտոնները զբաղեցնող աշխատակիցներն իրականացնում են հարկային տեսչության աշխատանքների իրավական ապահովումը, մասնակցում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի գույքի արգելադրման աշխատանքներին, նախապատրաստում են բռնագանձման եւ սնանկության հայցերը, որպես ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացուցիչ հանդես են գալիս ՀՀ դատարաններում, մասնակցում են հարուցված կատարողական վարույթների գործընթացներին, իրականացնում են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթները /Իրավաբանական կրթությունը պարտադիր է/:

4-7-րդ կետերում նշված պաշտոնները համալրելու համար կազմակերպվող բաց մրցույթին կարող են մասնակցել հարկային ծառայողները եւ ՀՀ կառավարության 2002թ. հոկտեմբերի 3-ի «Հարկային ծառայության պաշտոնում նշանակվելու համար անհրաժեշտ մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 2167-Ն որոշմամբ հաստատված մասնագիտությունների ցանկում նախատեսված մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն /պետական կամ արտոնագրված ԲՈՒՀ-ի/ ունեցող, հայերենին տիրապետող ՀՀ քաղաքացիները:

**Դիմորդները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը**

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով եւ հայտարարություն «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքով հարկային ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ (Ձեւերը լրացվում են փաստաթղթերը ներկայացնելիս:).
- անձնագրի պատճենը, տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների) եւ աշխատանքային գրքույկի պատճենները՝ մասնագիտական վերապատրաստման վկայականների եւ հավաստագրերի պատճենները
- արական սեռի անձինք՝ նաեւ զինգրքույկի կամ դրան փոխարինող փաստաթղթի պատճենը
- երկու գունավոր լուսանկար՝ 3 X 4 սմ չափսի:

**Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:**
**Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը $10^{00}$ -ից մինչեւ $13^{00}$, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:**

***Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 23.08.2012թ. ժամը 13:00-ն:***

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ ԿԱ ՊԵԿ մրցութային հանձնաժողով / Երեւան, Մ.Խորենացի փողոց շ.7, հեռ. 59-46-30, 59-46-32, 59-46-27, 59-46-28 /:

***Մրցույթը կանցկացվի 07.08.2012թ. ժամը 09:30, Արաբկիրի հարկային տեսչության շենքում՝ ք.Երեւան, Կոմիտասի 35 :***

Մրցույթի անցկացման վայրի, օրվա եւ ժամի հնարավոր փոփոխությունների մասին լրացուցիչ կիրապարակվի մամուլում եւ ՀՀ ԿԱ ՊԵԿ ինտերնետային կայքում՝ մրցույթից առնվազն երկու շաբաթ առաջ:

Մրցույթի հարցաշարը կտրամադրվի ՀՀ ԿԱ ՊԵԿ Անձնակազմի կառավարման վարչությունում մագնիսական կրիչներով:

***ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության մրցութային եւ ատեստավորման հանձնաժողով***

# Վերջին մեկ ամսվա ընթացքում PKK-ի սպանած թուրք զինծառայողների թիվը հասավ 38-ի

## *Քրդական այս կազմակերպությունը առեւանգում է նաեւ կուսակցական գործիչներին*

Մինչեւ հունիսի վերջերը PKK-ի գրոհայինների հետ բախումներում սպանված թուրք զինծառայողների եւ ոստիկանների թիվը 23 էր: Երեկվա տվյալներով, ինչպես վկայում է «Հաբեր կարիտալ» կայքէջը, այս ցուցանիշն արդեն հասել է 38-ի: Սպանվածների մեջ կան սպաներ, որոնցից առնվազն երկուսը մայոր են:

Թե որքան կշարունակվեն այս արյունալի բախումները, չգիտենք: Սակայն թուրք ղեկավարների տասնամյակների վաղեմություն ունեցող հայտարարությունները, թե «գետնին չի մնա շեհիդների արյունը, Թուրքիան մեծ պետություն է, անպայման հաղթահարելու է ահաբեկչությունը», արդեն թուրք բնակչության շրջանում ընկալվում են իբրեւ անիմաստ եւ դատարկ ձեւակերպում, իսկ քրդերը դա համարում են զինված բախումներում PKK-ի առջեւ թուրքական անվտանգության ուժերի ընկրկման դրսեւորում:

Հատկանշական է, որ մինչ խորհրդարանական «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությունը երկրի քրդաբնակ հարավարեւելյան շրջանների համար պահանջում էր «ժողովրդավարական ինքնուրույնություն», այս կուսակցության առանձին գործիչներ անկախությունը համարում էին ինքնուրույնության վերջնական նպատակ, Թուրքիայի քաղաքական շրջանակներում ընդդիմությունը երկրի մասնատման մասին է խոսում, եւ քրդական հարցում որդեգրած դիրքորոշման համար վարչապետ Էրդողանի կառավարությանը մեղադրում մասնատման արեւմտածին ծրագրերին ծառայելու մեջ:

Ըստ երեւույթին, նպատակին չեն ծառայում երկրում «քրդական ծագումով Թուրքիայի քաղաքացիների իրավահավասարությունը» նոր սահմանադրությամբ ապահովելու, քրդաբնակ շրջանների սոցիալական խնդիրները լուծելու եւ այս շրջանների բարգավաճմանը նպաստելու կառավարության խոստումները: Այսպիսով, հետզհետե խորանում է Թուրքիայում քուրդ ազգաբնակչության եւ թուրքական պետական իշխանության, իսկ քրդաբնակ հարավարեւելյան շրջաններում՝ քրդերի ու թուրքերի միջեւ առաջացած անջրպետը:

75-միլիոնանոց Թուրքիայում քրդերը բնակչության շուրջ 25 տոկոսն են կազմում, սակայն թուրքերի հետ համեմատ նրանք ավելի արագ են աճում: Չհաշված Էրզրումն ու Կարսը, արեւելյան եւ հարավարեւելյան անխտիր բոլոր քաղաքներում նրանք բնակչության թվով գերազանցում են թուրքերին, էլ չենք խոսում գյուղերի եւ գյուղաքաղաքների մասին:

Այլ կերպ, Մեծ եղեռնի տարիներին հայերի բնաջնջումից հետո թուրքերին չի հաջողվել հայապատկան տարածքներում իրականացնել թուրքական կենտրոններ ստեղծելու իրենց վաղեմի երազանքը: Կարծում ենք, ավելորդ չէ հիշեցնել, որ Թուրքիայում առկա քրդական հարցի հիմքը թուրքերի հետ քրդերի հարաբերությունները հավասարակշռող արեւմտահայության գազանային բնաջնջումն է:

Համենայն դեպս PKK-ն ոչ միայն զինված բախումների մեջ է մտնում թուրքական անվտանգության ուժերի հետ եւ սպանում թուրք զինծառայողներին ու ոստիկաններին, այլեւ առեւանգում է կուսակցական գործիչներին: Առեւանգման գլխավոր թիրախը երկրի արեւելքում եւ հարավարեւելքում վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության շրջանային վարչության ղեկավարներն են:

Երեկ, ինչպես նշել էր «Դունյա բուլթենի» լրատվական գործակալությունը, PKK-ն առեւանգել է Վանի շրջաններից Գյուրփնարի շրջանային վարչության ղեկավար Հայրուլլահ Թանիշին: Մինչ այդ առեւանգվել էր Լիջեի վարչության ղեկավար Վեյսել Չիչեքը, ապա եւ ազատ արձակվել՝ պայմանով, որ դուրս գա «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության շարքերից:

Նույնը կատարվել է անցյալ տարվա հունիսին Հազրոյում: Մինչդեռ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը վերջին 10 տարիներին խորհրդարանական ընտրություններում հաջորդաբար հաղթել եւ միանձնյա իշխանության է եկել երկրում: Այս առեւանգումները յուրատեսակ մարտահրավեր են Թուրքիայի միանձնյա իշխող Էրդողանի կուսակցությանն ու թուրքական կառավարության այսպես կոչված քրդական ամուլ նախաձեռնություններին:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ԹԵՀՐԱՆ

# Իրանը փորձարկել է նոր բալիստիկ հրթիռներ



**Իրանը փորձարկել է բալիստիկ հրթիռներ, որոնք կարող են հասնել Իսրայելի տարածքին: Փորձարկումներն իրականացվել են անապատում: Մասնավորապես փորձարկվել են փոքր հեռահարության «Շահաբ-1», «Շահաբ-2» եւ «Շահաբ-3» հրթիռներ, որոնք կարող են թռչել երկու հազար կիլոմետր: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի տվյալներով, փորձարկվել են նաեւ «Խիամ», «Ֆաթհ» եւ «Թոնդար» հրթիռներ:**

**Սպասվում է, որ հուլիսի 4-ին իրանցիները կփորձարկեն օդանավեր եւ անօդաչու թռչող սարքեր: Երկուշաբթի օրը սկսած փորձարկումներն ու զորավարժանքները ժամանակի առումով համընկան Եվրոմիության հաստատած հակաիրանական նավթային բեռնարգելքին:**

**«Շահաբ-3Մ» հրթիռը թռչում է ավելի քան երկու հազար կիլոմետր: «Դա փաստորեն միջին հեռահարության հրթիռ է եւ կարող է հասնել Իսրայելի տարածքին», նշում են Արեւմուտքի լրատվամիջոցները:**

# Ֆրանսիան ստիպված է կրճատել բյուջեի ծախսերը

Ֆրանսիան ստիպված կլինի բյուջեի ռեկորդային կրճատում կատարել: Կառավարությունը պարտավոր է 2013-ին ծախսային հոդվածները կրճատել 33 մլրդ եվրոյով, որպեսզի կարողանա բյուջեի պակասորդը իջեցնել պահանջվող մակարդակին՝ ՀՆԱ 3 տոկոսին: Այս հետեւությանն են հանգել Ֆրանսիայի Հաշվիչ պալատի աուդիտորները, որոնք հաշվետվություն են ներկայացրել երկրի նոր կառավարությանը, գրում է «Ֆայնենշլ թայմս» թերթը:

Պալատի ներկայացուցիչ Դիդիե Միգոյի կարծիքով, 2013-ը վճռական տարի կդառնա բյուջեի առողջացման համար: Ծրագրի հաջողությունը մեծապես կախված կլինի երկրի տնտեսական վիճակից: Տվյալ կանխատեսումը հիմնվում է 1 տոկոս տնտեսական աճի կանխատեսման վրա:

Արդեն 2012-ին երկրի պետական պարտքը կարող է հասնել ՀՆԱ 90 տոկոսին: Ըստ որում, Ֆրանսիայի ֆինանսական դիրքերը էապես ավելի թույլ են, քան եվրոգոտու առաջնորդ Գերմանիայինը: Ապագայում դա կարող է հանգեցնել այնպիսի բարդությունների, որպիսիք առկա են Իտալիայում եւ Իսպանիայում:

# Ընտրակաշառքի վրացական տարբերակները

## *Կամ ինչու է վարչապետ նշանակվել նախկին ՆԳ նախարար Վանո Մերաբիշվիլին*

**Վրաստանում աշնանը սպասվող ընտրություններին ընդառաջ «Կովկասում ժողովրդավարության կղզյակ» ներկայացվող ու ամերիկյան աջակցության բոլոր ձեւերից առատորեն օգտվող այդ երկրում էլ կարծես գործածության մեջ են մնում նախընտրական այնպիսի մոտեցումներ, ինչպիսիք են ընտրակաշառքը, վարչական ռեսուրսի օգտագործումն ու բոլոր հնարավոր եւ վերահսկելի ընտրատեղամասերում 100-տոկոսանոց իշխանական հաղթանակ ապահովելու տրամաբանությունը:**

**Այսօր նախատեսվում է, որ վրացական խորհրդարանը, արտահերթ նիստ գումարելով, կհաստատի օրերս ձեւավորված նոր կառավարության կազմը՝ մեկ նոր պետնախարարով՝ զբաղվածության հարցերով, որոնց գլխին վարչապետ է կարգվել 2004-ից ներքին գործերի նախարարի պաշտոնը զբաղեցրած, արդեն նախկին նախարար Վանո Մերաբիշվիլին: Վրաստանի կառավարության առաջարկված նոր կազմը միայն 4 նոր անձինք կունենա, եթե խորհրդարանը հաստատի արդեն իսկ Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու ներկայացրած կազմը: Ընդ որում, չորս նոր նախարարներից ՆԳ նոր նախարար Բաչո Ախալիան պաշտպանության նախկին նախարարն է, որի տեղում էլ հայտնվել է կրթության ու գիտության նախկին նախարարը:**

**Եվ բնավ էլ պատահականություններ կամ վարչապետական մեծ տաղանդի շնորհիվ չէ, որ ներքին գործերի նախկին նախարարը, որ Վրաստանում շատ պարագաներում երկրորդ մարդն է համարվում, նշանակվել է վարչապետ, այն էլ ընտրական շրջանի ակտիվացման շեմին: Ամենապարզունակ մոտեցմամբ՝ Մերաբիշվիլին Սաակաշվիլիի ամենավստահելի անձանցից է, ուստի վստահելի է նախընտրական հարցերը կարգավորելու համար:**

**Սաակաշվիլին իր այս նշանակումը հիմնավորել է, թե Մերաբշվիլին կարողացել է «հաղթահարել կոռուպցիան ու կրիմինալը Վրաստանում», մինչդեռ տարբեր գնահատականների ու վերլուծությունների համաձայն՝ Վրաստանում ճիշտ այնքան կոռուպցիա կա, որքան, ասենք, հարեւան երկրներում, պարզապես այն ոստիկանական համակարգում այլեւս չի արտահայտվում ստորին օղակներում: Մինչդեռ վերին էշելոնների պարագայում անգամ միջազգային որոշ վերլուծական կենտրոններ ամեն ինչ կենտրոնացված են համարում 3-4 անձանց ձեռքերում, որոնցից մեկն էլ Մերաբիշվիլին է: Ավելին, Մերաբիշվիլին է 2004-ից ի վեր Վրաստանում տեղի ունեցած ընդդիմադիր շարժումների հիմնական «սանձահարողը»:**

**Այո, պարեկային ոստիկանության առումով Վրաստանում բարեփոխումներ իսկապես իրականացվեցին, ու դրանց իրագործումը փաստացի ոչ թե Մերաբիշվիլու ձեռքի, այլ շարունակման հարցն էր, քանի որ բարեփոխումները սկսեց Սաակաշվիլու ժամանակի եւս մեկ մտերիմ, Վրաստանից թերեւս ընդմիշտ բացակայող ու Ֆրանսիայում բնակվող Իրակլի Օկրուաշվիլին, որին մեղադրանքներ են առաջադրվել, ու եթե հայտնվի երկրում՝ կդատեն: Օկրուաշվիլու պաշտոնավարման ժամանակ էր, որ աշխատանքից ազատվեց 14000 ոստիկան, ընդունվեցին նորերը, իսկ Մերաբիշվիլին նախարար դարձավ, երբ նմանօրինակ հարցերն արդեն լուծված էին:**

**Իրականում Մերաբիշվիլուն հաջողվեց վրացական եղած-չեղած ուժային ու իրավապահ կառույցների մեծ մասը դարձնել իր ենթակայության տակ գտնվող, իսկ վրացիամետությունից քիչ հեռու կանգնածների համար Վրաստանը հենց Մերաբիշվիլու միջոցով եւ օրոք է դարձել «ոստիկանական պետություն»:**

**Առավել հետաքրքրական է, որ նորանշանակ վարչապետն արդեն իսկ որոշ քայլեր արել է, որոնք ամենայն հանգստությամբ կարելի է տեղավորել «ընտրական կաշառք» հասկացության տակ ճիշտ այնպես, ինչպես վրացական իշխանությունները ընտրակաշառք են գնահատել ու ըստ այդմ էլ առգրավել վրացի միլիարդատեր, ընդդիմադիր Բիձինա Իվանիշվիլու եղբորը պատկանող ալեհավաքները, որոնք արտոնյալ պայմաններով էին իբր տրվում բնակչությանը:**

**Մերաբիշվիլու նախաձեռնությամբ, համաձայն, յուրաքանչյուր ընտանիք արդեն հաջորդ տարի 1000 լարի (մոտ 625 դոլար) արժեքով վաուչեր կստանա, որը կարող է տնօրինել ինչպես ցանկանա, թեեւ, Մերաբիշվիլու մտահղացմամբ, այդ գումարը կարող է ծախսվել կոմունալ վճարումների, դասագրքերի, պարարտանյութի ու նման բաների համար:**

**Պետական վաուչեր ներկայացվող ու կարծես ոչ մի հրատապ հարցով չպայմանավորված այս նախաձեռնությունը, որ վրացական ընդդիմությունը եւս գնահատել է որպես ընտրողներին կաշառելու փորձ, նույնքան ընտրակաշառք է, որքան Բիձինա Իվանիշվիլու անվան հետ կապված «Cartu» հիմնադրամի՝ վրացի հնգակի աշխարհի չեմպիոն, սամբիստ Ուշանգի Կուզանաշվիլու անձնական հաշվին 16,3 հզ. դոլար փոխանցումը՝ որպես բարեգործություն, որն, ի դեպ, պարբերաբար նույն մարզիկին տրամադրվում է 2007-ից:**

**Այն, որ պետական մակարդակով ընտրակաշառքը Վրաստանում հասցվել է փաստացի այնպիսի մի չափի, որպիսին հայաստանյան խորհրդարանական ընտրություններին միանգամից մի քանիսից փող վերցնող ընտրողներից եւ ոչ մեկը երեւի «չաշխատեց», դեռեւս չի նշանակում, թե, նույն հայաստանյան իրողությունների նման, կաշառք տվողին էլ հենց կընտրեն: Սակայն ակնհայտ է, որ վրացական իշխանություններն իշխանական ռեսուրսն օգտագործում են պարտելու հնարավոր ընտրակաշառքների փորձերը, մինչդեռ սեփական նախաձեռնությունը մատուցվում է որպես պետական հոգածություն:**

**Ելնելով այսօրինակ նախաձեռնությունից, թերեւս կարելի է ենթադրել, որ Մերաբիշվիլին վարչապետի պաշտոնում ոչ թե վարչապետություն է անելու, այլ իրապես փորձելու է ապահովել Սաակաշվիլու գլխավորած «Ազգային շարժում» իշխող կուսակցության հաղթանակը հոկտեմբերին կայանալիք խորհրդարանական ընտրություններում, որոնց, ի դեպ, հայաստանյանի նմանությամբ, 2013-ին կհետեւեն նախագահական ընտրությունները, որոնց, ըստ գործող վրացական օրենսդրության, Սաակաշվիլին չի կարողանա մասնակցել: Իսկ խոսակցությունները, թե կուժեղացվի վարչապետի պաշտոնն, ու Սաակաշվիլին կարող է ձեւական դարձնել նախագահի աթոռը, եւս մեկ ապացույց են, որ վարչապետության ուժեղացման համար էլ առավել հարմար թեկնածու, քան «ուժային» Մերաբիշվիլին, լինել չէր կարող:**

**Ինչ վերաբերում է Մերաբիշվիլու՝ արմատներով Ջավախքից լինելու հանգամանքին ու դրանով պայմանավորված ինչ-որ ուշադրության ակնկալիքներին, ապա գրեթե վստահաբար Ջավախքի համար ոչ մի շահեկան բան տեսնել հնարավոր չէ, հատկապես երբ նախընտրական շրջանում վրացական իշխանություններն էլ ամենայն առատությամբ ինչ ասես խոստանում են, ու դրա հետ ո՛չ ջավախքյան արմատները կապ ունեն, ո՛չ էլ հայկական ծագում ունենալու վերագրումները:**

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԶԳ

## Մշակույթ

# Է՞ն ուրիշ Փրունզիկը

*«Մարդը լուսնի նման է՝ մի երեսը միշտ թաքցնում է»:*

*Մարկ Տվեն*

Թաքցնո՞ւմ էր իր մի երեսը Մհեր Մկրտչյանը: Կարծում եմ, նա դրա մասին չէր էլ մտածում, պարզապես նա իր այդ մի երեսը ցուցադրելու կարիքը չուներ՝ ոմանց նման հեռուստաէկրաններից ու լրագրերի էջերից չէր պատմում իր մասին, չէր սիրում պատմել: Եվ դրանից է, հավանաբար, որ անվանի արտիստին մարդիկ ճանաչում են ֆիլմերում (լա՛վ են ճանաչում) եւ թատրոնում (ոչ բավարար չափով) մարմնավորած իր կերպարներով միայն: Ֆիլմերը կան, հաճախ կրկնվում են, իսկ ներկայացումները, ավաղ, ոչ բոլորն են նկարահանվել-պահվել, այնքան էլ հաճախ չեն ցուցադրվում հեռուստաէկրաններին: Ասել է՝ Արտիստի էն մյուս երեսը բավարար ծանոթ չէ իր արվեստի երկրպագուներին:

Շա՜տ ափսոս, որ նրա այդ զրույցները ընկերական նեղ շրջանակներում մնացին ու հասու չեղան լայն հասարակայնությանը, եւ Արտիստի այդ մի երեսը բաց մնաց միայն նրա բանավոր զրույցներում, մտերիմների հետ հանդիպում-հավաքներում, ուր ինքը բացվում-խոսում էր: Խմբովին, թե անհատական նման ամեն հանդիպում վերածվում էր տոնի: Եթե ծիծաղ էր՝ տեղը տեղին հումոր էր ու սրամիտ պատմություն, եթե լուրջ ասելիք էր՝ իմաստուն դատողությունների անսպառ հորդացում էր, որ խրատական էր, մտապահելի ու սերտելի: Այդ հանդիպումներում դահլիճի պատերը նեղ էին թվում. բեմում ինքն էր՝ վաստակի ծիրանին ուսած, դահլիճում՝ մեծ արտիստի լեզուն ու տարածուն ներկայության բերկրանքն ապրող, իրենց համակրանքն ու սերը առ մեծ դերասանը պահած մարդիկ: Եվ նման հանդիպում-զրույցներում Արտիստը խոսում էր ո՛չ իր մասին, այլ արվեստում ունեցած դերասանի դերի՛, դերերի կերպավորման նրա անցնելի՛ք ճանապարհի, նրա պատասխանատվությա՛ն մասին: Խոսում էր կինոյի հանդեպ թատրոնի գերակայության, թատրոնը որպես քուրմերի իսկական տաճար ընկալելու եւ ա՛յդ ընկալումը որպես դերին պատրաստ լինելու առաջին պայման ունենալու ու նոր միայն բեմ դուրս գալու ռիսկին դիմելու մասին: Եվ ամենակարեւորը՝ մնալ ազգայի՛ն դերասան, դավանանքին անդավաճան: «Ինձ համար չափազանց կարեւոր է իմ ազգային կերպարը: Իմ ազգային կերպարը դարձել է իսկական իմ մեծ ձգտումը, լուրջ ձգտումը: Ես դա իմացա էն ժամանակ, երբ որ չդավաճանեցի իմ ինտուիցիային: Եվ դա էր պատճառը, որ օտար կինոստուդիաները կամաց-կամաց նկատում են էս տեսակը՝ մարդ, որի վրա ուրիշից ոչինչ չկա: Ազգային նման պահվածքն է մարդուն մղում համամարդկային արժեքների հետ շփման: Մարդու էս տեսակը պահելը շատ դժվար է՝ պետք է նախ եւ առաջ ինքդ քեզ լավ ճանաչես, դա էլ հենց ինքնաճանաչողությունն է»:

Ինքն ինչպե՞ս էր անցնում այդ ճանապարհը. «... կռիվ տալով՝ ինքս ինձ հետ, ռեժիսորի հետ: Կռվել եմ ու սիրել եմ պիեսը, դերն արդեն հոգուս մոտ է, կերպարն իմ ուզածի պես է: Երեխայիս հագցրել եմ իմ ճաշակով, իմ ուզածով, արդեն ես կարող եմ նրան դուրս տանել, արդեն ցույց տալ: Եվ երբ արդեն անցնում եմ ստեղծագործելուն՝ խաղալուն, սկսվում է սիրո բացատրությունը. դերի հետ սեր եմ բացատրվում»:




Նրան՝ հայի այդ լավագույն տեսակին, ում միութենական ճանաչված ռեժիսորները բնութագրում էին որպես ամենահետաքրքրական արտիստներից մեկը, աշխարհը տեսավ ու սիրեց, եւ նրանով մեզ ճանաչեց ու երանի տվեց մեզ, որ այդպիսի արտիստ ունենք: Նրա ժպիտի մեջ մարդիկ իրենց ուրախությունը տեսան, նրա տխուր աչքերի մեջ փնտրեցին իրենց թախիծը, նրա հմայիչ ծիծաղով վարակվեցին, ու կյանքին սկսեցին ավելի թեթեւ նայել: Նրանով թեթեւացրին իրենց ապրումները, նրա մարմնավորած կերպարների մեջ տեսան իրենց ու իրենք իրենց ավելի լավ ճանաչեցին: Ճանաչեցին ու սիրեցին նրա արտիստական փայլուն խաղով, նրանից ճառագող հմայքով, նրա հրաշալի իմպրովիզացիաներով: Այս վերջին հատկությունն էր հատկապես նրա՝ պահանջված դերասան լինելու գրավականը: Այդպես էր՝ նա միշտ պահանջված դերասան էր, պահանջված զրուցակից, պահանջված ընկեր: Նրան սիրում էին ռեժիսորները, եւ նա էր սիրում աշխատել այն ռեժիսորների հետ, ովքեր դերասանի հետ սիրով են աշխատում, նրա առաջարկներն ընդունել գիտեն... «Դերասան սիրող ռեժիսորները տաղանդավոր մարդիկ են, ովքեր զգում են, որ դերասանը նուրբ մեխանիզմ է: Ռեժիսորը այդ բանը չզգա՝ դերասանը կփանդվի տեղն ու տեղը, կխառնվի, կկորցնի արդյունք տալու, արվեստ ցուցադրելու իր կարողությունը. նա պիտի զգացմունք տա, իսկ զգացմունք ստանալու համար նրան փայփայել է պետք: Դերասանն էլ մի երեխա է՝ գիտի խռովել, արգելակվել... Բայց գիտի նաեւ ոգեւորվե՜լ: Այ սա պիտի ստանա ու սրան պիտի հասնի ռեժիսորը: Շատ դժվար է աշխատել հատկապես սովորեցնող ռեժիսորների հետ, ովքեր միշտ մտածում են, թե իրենք ամեն ինչ գիտեն, իսկ դերասանն, ահա, իրենցից պիտի սովորի, ովքեր միշտ մտածում են, իրենց պահում են այնպես, իբր դերասանն առնվազն ... գործիք է»:

Այդ ի՜նչ սեր էր, այդ ի՜նչ կապվածություն էր թատրոնի հետ, որ բազում ֆիլմերում փառահեղ դերեր մարմնավորած ու հենց ա՛յդ ֆիլմերով ճանաչումի հասած դերասանը դարձյալ գերադասեց բեմը, թատրոնը. «Թատրոնի մի դերը չեմ փոխի կինոյի հազար դերի հետ. թատրոնը աղոթքի տեղ է, ծես է, ամենօրյա սխրանք, սրբությո՛ւն է, թե՛ւ է, թռի՛չք է: Թատրոնը քուրմերի իսկական տաճար է, որտեղ Աստծո հետ, տաղանդի, մուսայի հետ շփում է կատարվում»: Թատրոնի հանդեպ նրա այդ սիրո եւ հափշտակության բարեբեր հետեւանքը չէ՞ր, արդյոք, որ նա պիտի ստեղծեր ի՛ր թատրոնը, սեփակա՛ն թատրոնը: «Ամեն մի իսկական դերասան, իսկական արտիստ ինչ բեմում էլ ստեղծագործի՝ իր ներսում ունի սեփական թատրոնը: Եվ երբ համընկնում, ներդաշնակում են «ներքին» ու «արտաքին» թատրոնները՝ հնարավորություններով, նախասիրություններով, ձգտումներով՝ մե՛ծ բախտավորություն է ստեղծագործողի համար»:

Մեր հանդիպումներից մեկին հարցրի.

- Խակ դերասանները հաճախ եւ ավելի շուտ լաց լինողի իմիտացիա են ստեղծում, երբ պետք է, որ իրենց կերպարի հուզմունքն ու լացը ներկայացնեն, մի տեսակ նկատվում է, որ դա հուզմունք չէ: Մեծերն ինչպե՞ս են վարվում, օրինակ՝ Մհեր Մկրտչյանը:

Նախ քթի տակ ժպտաց՝ «Ես էլ քո ասած մեծերից եմ, հա՞», հետո՝ ավելի լուրջ.

- Մարդը չի կարող առանց պատճառի լաց լինել, ուրեմն նույնքան տարօրինակ ու անհետաքրքիր է, երբ անիմաստ ծիծաղում է: Հանդիսատեսն անմիջապես կզգա կեղծ լացն էլ, կեղծ ծիծաղն էլ: Որպեսզի քո դերում կերպարին, այսպես ասած, լացցնես, դու պիտի դիտողին նախապատրաստես նրա այդ լացին՝ նախապատրաստես իրավիճակի ազդեցություններով, հոգեկան ապրումներով, էլ չգիտեմ ինչով, նոր միայն բերես-հասցնես լացելուն: Թե չէ, մի տեսակ անհարմար վիճակի մեջ է ընկնում դերասանը: Նույն անհարմար վիճակի մեջ է ընկնում նաեւ անտեղի ծիծաղեցնողը: Ես չեմ ընդունում անտեղի ծիծաղեցնելն էլ, անտեղի ծիծաղելն էլ:

Մհեր Մկրտչյան Արտիստի համար իր հանդիսատեսներից յուրաքանչյուրը մի նուրբ զգայարան է, որին դերասանը պետք է սիրի: Եթե արտիստի մեջ այդ սերը չլինի, նա դժվար թե կարողանա արժեքավոր ու մնայուն բան ստեղծել: Այս մտորումները նա կիսում էր ընկերների, մտերիմների հետ, նա դրանք բարձրաձայնում էր հատկապես իր ստեղծած արտիստական թատրոնի գործունեության սկզբում, երբ արդեն դերասաններով պետք է համալրեր թատրոնը. «Ես իմ կողքին ուզում եմ այնպիսի արվեստագետներ, այնպիսի նվիրյալներ ունենալ, ովքեր զարդարեն ամեն մի թատրոն, այլ ոչ թե զարդարվեն որեւէ մի թատրոնով»:

Նրա համոզմունքն էր, որ իր արվեստը ներկայացնող, իր դերերը կերպավորող արտիստը պետք է սիրով կապված մնա իր կոչմանը՝ վկայելով Վահան Տերյանին. «Ամեն ինչ սիրով, առանց սիրո՝ ոչինչ»: Եվ, հետաքրքրական է, որ նույնիսկ բանաստեղծական ձեւի մեջ էր դրել թատրոնը սիրելու իր բացատրությունը. «Լավ կոշիկ կկարեի, թե թատրոնի չափ սիրեի, լավ գյուտեր կհորինեի, թե թատրոնի չափ սիրեի: Մսագործ էլ որ լինեի, ատաղձագործ էլ որ լինեի, հանցագո՛րծ էլ թե լինեի, պոեմներ կհորինեի՝ թատրոնի չափ թե սիրեի...»:

...Այսօր հայ մեծանուն դերասան Մհեր Մկրտչյանը կդառնար 82 տարեկան: Եվ ամեն տարի այսօրը նրան հիշելիս հպարտության հետ մի ներքին մեղավորության զգացում է պատում՝ մենք նրան լա՞վ պահեցինք, մենք պատշա՞ճ ենք արժեւորում նրա մեծ, շա՜տ մեծ ներդրումը, կինոյում ու թատրոնում ունեցած նրա դերը:

Մտածենք այս մասին՝ Արտիստի ծննդյան 85-ամյակը սարերի հետեւում չէ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՊԻԿՅԱՆ

## ՃԱՆԱՉՈՒՄ

# Ե. Քոչարի տարածանկարն արժանացավ «լավագույն ստեղծագործություն» մրցանակին



**«ArtMonaco-Expo 2012»-ին «Բարձր արվեստ» կենտրոնը ներկայացրեց հայ դասականների՝ Հ. Այվազովսկի, Ա. Գորկի, Մ. Սարյան, Հ. Գյուրջյան, Հ. Կոջոյան, Լ. Թութունջյան, Ս. Փարաջանով, Ե. Քոչար, ինչպես նաեւ ժամանակակից արվեստագետների ստեղծագործությունները, որի առթիվ երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ Երվանդ Քոչարի տուն-թանգարանի տնօրեն Լալա Մարտիրոսյանն ասաց, որ առաջին անգամ է նման բարձր վարկանիշ ունեցող ցուցահանդեսին հայ կերպարվեստը մասնակից դառնում, բայց շատ ավելի պատվաբեր է, որ Ե. Քոչարի տարածանկարը արժանացավ «ArtMonaco-Expo 2012»-ի «լավագույն ստեղծագործություն» մրցանակին:**

**Նշենք, որ «ArtMonaco-Expo 2012»-ին մասնակցում էին 99 պատկերասրահ, որոնք ներկայացնում էին շուրջ 4000 արվեստի գործ, որոնց թվում էին Պիկասոյի, Բուտերոյի, Մոդիլյանիի եւ աշխարհահռչակ այլ վարպետների ստեղծագործություններ:**

**Լ. Մարտիրոսյանը անդրադառնալով Ռուբեն Քոչարի ստեղծած «Երվանդ Քոչարի տարածական նկարչությունը» վավերագրական ֆիլմին նշեց. «Ռուբեն Քոչարի ստեղծած ֆիլմն ամբողջովին ներկայացնում է Ե. Քոչարին՝ որպես տարածանկարչության հիմնադրման գործում գլխավոր դերակատար»: Ֆիլմի հեղինակն էլ իր հերթին նշեց, որ մեր մշակույթի գործիչների ստեղծագործությունները հասարակության կողմից տարածում չեն գտնում. «Ե. Քոչարի տարածական նկարչության մասին ժողովուրդը չգիտի, եւ ստացվում է այնպես, որ ինչ-որ մեկը գալիս է արտերկրից եւ մեզ ցույց է տալիս, թե 3D ինչ է՝ մոռանալով, թե ով է այն ստեղծել: Վերջին շրջանում մեծ աղմուկ բարձրացրեց «Մոսկվա» կինոթատրոնի դիմաց ստեղծված 3D պատկերը, որը բնավ չեմ փնովում, սակայն, մեր ժողովուրդը չպետք է զարմանա դրա վրա, քանի որ մենք ավելի առաջ ենք անցել, եւ մինչ այդ մենք ունեինք նման ստեղծագործություններ»:**

**Մեր մշակույթի գործիչներին, եւ իրենց ստեղծագործությունները հասարակության կողմից էլ ավելի ճանաչելի դարձնելու նպատակով Ռուբեն Քոչարը ստեղծեց հայ մեծանուն նկարիչ-քանդակագործ Երվանդ Քոչարին նվիրված ֆիլմ, որը հանրության դատին կներկայացվի «Ոսկե ծիրան» Երեւանի միջազգային կինոփառատոնի շրջանակում՝ հուլիսի 12-ին:**

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# «Հայաստանի Փոքրիկ Երգիչներն» ուղեւորվում են Ճապոնիա

**Հայաստանի Փոքրիկ Երգիչներ երգչախումբը վերջերս էր վերադարձել Վրաստան, Լատվիա, Շվեդիա կատարած համերգային շրջագայությունից: (Շվեդիայում երգչախումբը մասնակցեց «Թող պատգամն երգի» մանկապատանեկան փառատոնին, որտեղ ճանաչվեց լավագույն երգչախումբ եւ հնարավորություն ստացավ համերգով հանդես գալ Ստոքհոլմի Քոնսերթհուսեթ նշանավոր համերգադահլիճում):**




**Մի քանի օր անց՝ հուլիսի 7-ին, Ճապոնական Մին Օն համերգային կազմակերպության հրավերով Հայաստանի փոքրիկ երգիչները կմեկնեն Ճապոնիա՝ համերգային շրջագայության: Երգչախումբը 16 համերգով հանդես կգա Ճապոնիայի խոշոր քաղաքներում՝ Յամագատա, Կանագավա, Տոչիգի, Ֆուկուոկա, Հոկայդո, Նագանո, Տոկիո եւ այլն: Նաեւ կունենա բազմաթիվ հանդիպումներ ճապոնացի մշակույթի գործիչների, հայտնի արվեստագետների եւ երիտասարդների հետ:**

**Շրջագայությունը միտում ունի առավել սերտ կապեր հաստատելու հայ եւ ճապոնացի ազգերի միջեւ, երգչախումբը ներկայացնելու է հայկական երաժշտական հարուստ մշակույթը եւ, ինչպես միշտ, հնչեցնելու նաեւ համաշխարհային անվանի հեղինակների ստեղծագործություններ:**

**«Հայաստանի Փոքրիկ Երգիչներ» երգչախումբը իր ողջ շրջագայության ընթացքում նաեւ կկատարի՝ «Հայ Փոքրիկ Երգիչներ» միջազգային ասոցիացիայի եւ Տիգրան Հեքեքյանի կողմից հայտարարված միջազգային մանկական խմբերգային մրցույթի երկու հաղթողների ստեղծագործությունները: Հաղթողները կհայտարարվեն 2012թ-ի հունիս ամսվա ընթացքում:**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Դավթաշեն 3 թաղ. ԿՁՀ 3 | կաթսայատուն | 246.20 | 215.00 | 10,400,000 |
| 2 | Դավթաշեն 2-րդ թաղ. ԿՁՀ 2 | կաթսայատուն | 371.25 | 333.20 | 11,200,000 |
| 3 | Գյուլիքեխվյան փողոց նրբ. 1/3 | կաթսայատուն | 237.85 | 206.5 | 4,800,000 |
| 4 | Նորագավիթ 9 փողոց 1/1 | կաթսայատուն | 247.7 | 233.11 | 5,970,000 |
| 5 | Ազատամարտիկների 7/3 | կաթսայատուն | 1541 | 237.09 | 24,600,000 |
| 6 | Սասունցի Դավիթ 13 | կաթսայատուն | 122.7 | 122.7 | 13,400,000 |
| 7 | Բաշինջաղյան 20/4 | կաթսայատուն | 261.25 | 261.25 | 6,200,000 |
| 8 | Ռայնիսի փողոց, Ձեյթուն 6/3 | կաթսայատուն | 422.16 | 381.84 | 10,970,000 |
| 9 | Այասի փողոց թիվ 1/3 | կաթսայատուն | 414.50 | 305.70 | 25,000,000 |
| 10 | Ուլնեցու փողոց 3-րդ փակ. 4/2 | կաթսայատուն | 249.30 | 129.70 | 14,650,000 |
| 11 | Տիգրան Մեծի 26 | կաթսայատուն | 305.00 | 261.20 | 37,740,000 |
| 12 | Հ Հակոբյան 1/7 | կաթսայատուն | 108.80 | 108.80 | 30,870,000 |
| 13 | Մամիկոնյանց փող. 56/9 | կաթսայատուն | 218.24 | 260.50 | 45,770,000 |
| 14 | Լեփսիուսի 2-րդ փող թիվ 37/5 | կաթսայատուն | 109.15 | 109.15 | 6,620,000 |
| 15 | Ռուբինյանց 2/13 | կաթսայատուն | 303.93 | 303.93 | 18,515,000 |
| 16 | Բաղրամյան պող. 25 | կաթսայատուն | 216.10 | 188.10 | 38,910,000 |
| 17 | Աբովյան 62շ. 31 տարածք | ոչ բնակելի տարածք | | 40.95 | 12,850,000 |
| 18 | Արշակունյաց 6 | ոչ բնակելի տարածք | | 62.70 | 5,100,000 |
| 19 | Հերացի 16 շ. 55 տարածք | ոչ բնակելի տարածք | | 97.32 | 6,500,000 |
| 20 | Ռայնիսի փողոց 26/3 | կաթսայատուն | 240.75 | 240.75 | 7,100,000 |
| 21 | Մոլդովական փողոց 50/9 | կաթսայատուն | 192.66 | 163.10 | 12,230,000 |
| 22 | Խորենացի 47 | կաթսայատուն | 144.00 | 144.00 | 11,820,000 |
| 23 | Նորաշխարհյան 17/9 | կաթսայատուն | 238.12 | 238.12 | 11,950,000 |
| 24 | Մամիկոնյանց 1/3 | կաթսայատուն | 307.20 | 280.90 | 29,270,000 |
| 25 | Կուրղինյան 5/3 | կաթսայատուն | 162.97 | 135.50 | 11,090,000 |
| 26 | Սեբաստիա 18/2 | կաթսայատուն | 194.83 | 173.00 | 11,320,000 |
| 27 | Օհանովի 58/1 | կաթսայատուն | 307.50 | 283.85 | 17,200,000 |
| 28 | Սաֆարյան 16/4 կաթսայատուն | կաթսայատուն | 306.25 | 288.00 | 15,260,000 |
| 29 | Բաշինջաղյան փող.հ.185/1 | կաթսայատուն | 321.07 | 270.40 | 10,500,000 |
| 30 | Գալշոյան 19/1 | կաթսայատուն | 159.96 | 137.40 | 9,525,000 |
| 31 | Աթոյան անց., հ11/2 | կաթսայատուն | 436.00 | 436.00 | 19,350,000 |
| 32 | Խաղաղ Դոնի 12/8 | կաթսայատուն | 163.80 | 163.80 | 8,250,000 |
| 33 | Ճառագայթային փող., 136/1 | կաթսայատուն | 316.25 | 282.90 | 17,025,000 |
| 34 | Իսակովի պող., 52/27 | կաթսայատուն | 158.76 | 158.76 | 6,600,000 |
| 35 | Շահվերդյան 18, ԿՁՀ 31 | կաթսայատուն | 254.27 | 236.60 | 19,950,000 |
| 36 | Շիրակի 56 | կաթսայատուն | 255.38 | 228.80 | 6,075,000 |
| 37 | Վիլնյուսի փող.,67/2 | կաթսայատուն | 242.50 | 212.75 | 6,300,000 |
| 38 | Կաթսայատուն, Արծրունու փող. 16/2 | կաթսայատուն | 138.00 | 115.70 | 6,450,000 |
| 39 | Նոր-Նորք 8-րդ մ/շ 17/4 | կաթսայատուն | 241.25 | 210.40 | 7,650,000 |
| 40 | Գաջեգործների 74/2 | կաթսայատուն | 125.05 | 125.05 | 3,798,000 |
| 41 | Ջարենցի փողոց թիվ 76/5 | կաթսայատուն | 2,251.36 | 1,244.00 | 448,875,000 |
| 42 | Վիլնյուսի փող. Թիվ 91/2 | կաթսայատուն | 243.18 | 218.30 | 13,365,000 |
| 43 | Ռուբինյանց փողոց թիվ 24/1 | կաթսայատուն | 158.72 | 158.72 | 12,600,000 |
| 44 | Ռուբինյանց փողոց թիվ6/5 | կաթսայատուն | 353.75 | 344.65 | 13,707,000 |
| 45 | Կաթսայատուն Նոր Արեշի 1/25 | կաթսայատուն | 195.50 | 195.50 | 8,880,300 |
| 46 | Արցախի փողոց 8/13 | կաթսայատուն | 439.06 | 439.06 | 29,605,500 |
| 47 | Գ. Մահարու 39/9 | կաթսայատուն | 328.00 | 328.00 | 9,083,700 |
| 48 | Աթոյան փողոց անցուղի 18/3 | կաթսայատուն | 441.95 | 441.95 | 20,295,000 |
| 49 | Էրեբունի 1 | կաթսայատուն | 240.72 | 240.72 | 12,892,500 |
| 50 | Էրեբունի փողոց 29/1 | կաթսայատուն | 262.30 | 262.30 | 8,060,400 |
| 51 | Տիտոգրադյան փող. 1/9 | կաթսայատուն | 161.00 | 161.00 | 10,319,400 |
| 52 | Տիտոգրադյան փող. 14/6 | կաթսայատուն | 175.75 | 175.80 | 11,401,200 |
| 53 | Խաղաղ Դոնի 31/12 | կաթսայատուն | 308.75 | 308.75 | 17,631,900 |
| 54 | Բաշինջաղյան փողոց հ.187/6, հ.1 ԿՁՀ | կաթսայատուն | 297.49 | 297.40 | 15,390,000 |
| 55 | ԿՁՀ հ.35 Արարատյան 1 | կաթսայատուն | 233.02 | 205.10 | 7,677,000 |
| 56 | Կոմիտասի պող. 7/12 | կաթսայատուն | 333.46 | 275.30 | 24,075,000 |
| 57 | Ադոնցի փող. Հ.17/6 | կաթսայատուն | 231.80 | 218.60 | 17,667,000 |
| 58 | Ադոնցի փող. Հ.13/10 | կաթսայատուն | 241.80 | 211.00 | 16,884,000 |
| 59 | Խաղաղ Դոնի փող. 27/4 | կաթսայատուն | 307.44 | 342.50 | 22,855,500 |
| 60 | Խաղաղ Դոնի փող. 7/8 | կաթսայատուն | 312.78 | 348.10 | 22,732,200 |
| 61 | Հալաբյան 27շ. 75 տարածք | ոչ բնակելի տարածք | | 57 | 3,780,000 |
| 62 | Զաքյան փողոց 1շենք 38 տարածք | ոչ բնակելի տարածք | | 58 | 10,863,000 |
| 63 | Քաջազնունու փողոց 11 շենք 111 շին. | ոչ բնակելի տարածք | | 351 | 15,750,000 |
| 64 | Ե. Քոչար 9 | ոչ բնակելի տարածք | | 231 | 34,380,000 |
| 65 | Ե. Քոչար 9 | ոչ բնակելի տարածք | | 199 | 28,800,000 |
| 66 | Ե. Քոչար 9 | ոչ բնակելի տարածք | | 60 | 9,000,000 |
| 67 | Կողբացի 2ա 93 ոչ բն. Տարածք | ոչ բնակելի տարածք | | 24 | 1,593,000 |
| 68 | Ագաթանգեղոսի 29 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 16 | 10,530,000 |
| 69 | Սարյան 2 48 տար. | ոչ բնակելի տարածք | | 6 | 260,000 |
| 70 | Արցախի 28/2 | ոչ բնակելի տարածք | 62.3 | 44 | 1,980,000 |
| 71 | Պուշկինի 44 | ոչ բնակելի տարածք | | 16.8 | 4,122,000 |
| 72 | Մաշտոցի 20 | ոչ բնակելի տարածք | | 37.8 | 8,770,500 |
| 73 | Թումանյան 1անց 28 շենք | ոչ բնակելի տարածք | | 24 | 4,500,000 |
| 74 | Իսակովի պող 36/1 19,շին | ոչ բնակելի տարածք | | 39.9 | 4,815,000 |
| 75 | Թումանյան 11 շ 72 տարածք | ոչ բնակելի տարածք | | 10.3 | 1,030,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում` WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի` 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ հուլիսի 19-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին` մինչև 2012թ հուլիսի 19-ը, ժամը 14.00-ն:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 25-ի թիվ 2 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն**

**Բաց ընթացակարգի ծածկագիրը` ՀԱԷԿ-ԱՊՁԲ - 64/12**

Պատվիրատուն` «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր հասցեում, հայտարարում է բաց ընթացակարգով գնում:

Հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կայանի կարիքների համար **նեյտրոնաչափիչ կանալների** գնման պայմանագիր (այսուհետ` պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու **նեյտրոնաչափիչ կանալների** ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետը պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ 2012թ. սեպտեմբերի 01-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են մասնակցել բաց ընթացակարգին, անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բաց ընթացակարգի թղթային ձեւով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին` ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակելու պահից հաշված 40-րդ օրվա ժամը 11:30:

Բաց ընթացակարգի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար 5000 ՀՀ դրամ գումարի չափով կամ համարժեք արտարժույթով, որը պետք է փոխանցվի Կոնվերս բանկ դրամով վճարման դեպքում 1930000199200100 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաշվեհամարին: **Ռուսերենով կամ անգլերենով հրավերի տրամադրման համար գանձվում է լրացուցիչ վճար 250.000 դրամի չափով: Հրավերը տրամադրվում է այդպիսի պահանջ ստանալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում**: Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում բաց ընթացակարգի հրավերը տրամադրել բաց ընթացակարգի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին հետեւյալ հասցեով. Արմավիրի մարզ ք. Մեծամոր, վարչական մասնաշենք, մինչեւ սույն հայտարարության հրապարակման պահից հաշված 40-րդ օրվա ժամը 11:30 եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով: Գնումների բազային միավորի հիսնապատիկը գերազանցող գնումների դեպքում, հայտերը հայերենից բացի կարող են ներկայացվել նաեւ ռուսերեն եւ (կամ) անգլերեն:

Հայտերը բացվում են հրավերում նշված պահին` հայտերի բացման նիստում:

Հայտերի բացման վայրը, օրը եւ ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Հաղթող մասնակցին որոշելու համար կիրառվելու են հետեւյալ չափանիշները

- հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, բավարար գնահատված եւ մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով`

գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի եւ (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները` պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի եւ գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ` ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի` Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

Մասնակիցների որակավորման տվյալների` հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար պետք է Պատվիրատուին ներկայացնեն բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

***«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություն***

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 27-ի թիվ 1 որոշմամբ**

**Ծածկագիրը` ՀԱԷԿ-ՊԸԱՊՁԲ - 65/12**

Պատվիրատուն` «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կայանի կարիքների համար **մարտկոցների եւ մարտկոցային կուտակիչների** մատակարարման պայմանագիր (այսուհետ` պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում **մարտկոցների եւ մարտկոցային կուտակիչների** մատակարարումը:

Գնումը ֆինանսավորելու է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2012 թվականի ծախսերի նախահաշվով նախատեսված հատկացումների հաշվին եւ գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչեւ 2012թ. **օգոստոսի** 01-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեն բոլոր անձինք` անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Թղթային ձեւով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին` ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 11-րդ օրացուցային օրվա ժամը 11:30-ը: Պարզեցված ընթացակարգի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար 5000 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի Կոնվերս բանկ դրամով վճարման դեպքում 1930000199200100 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաշվեհամարին: **Ռուսերենով կամ անգլերենով հրավերի տրամադրման համար գանձվում է լրացուցիչ վճար 250.000 դրամի չափով: Հրավերը տրամադրվում է այդպիսի պահանջ ստանալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում**: Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ստանալու օրվա ընթացքում պարզեցված ընթացակարգի հրավերը տրամադրել պարզեցված ընթացակարգի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին` ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 11-րդ օրացուցային օրվա ժամը 11:30 եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:

Մասնակիցների մասնակցության իրավունքի եւ որակավորման չափանիշների հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար Պատվիրատուին պետք է ներկայացվեն հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը Պատվիրատուն հայտարարում է հայտարարությունը էլեկտրոնային ձեւով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով`

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի եւ (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները` պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի եւ գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ` ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

***«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություն***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 3.7.2012, գինը` 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում` Արշակունեաց 2: